8.1	Բնակչության հոգևոր, գեղագիտական, ստեղծագործական ունակությունների, ռազմահայրենասիրական դաստիարակության ձևավորմանն ուղղված ծրագրեր	Ստեղծագործական կենտրոնների և մշակույթի տների միջոցով նախատեսվում է ստեղծել համապատասխան պայմաններ իրականացնել ծրագրեր՝ բնակչության հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորմանը:	Մշակույթի տների և գեղագիտական կենտրոնների կողմից կազմակերպվել և իրականացվել են տոնական, ազգային տոների և նվիրված մշակութային միջոցառումներ, համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ՝ Ամանոր, Տյառնըդառաջ, Բարեկենդան, Բանակի օր, Մարտի 8, թատրոնի միջազգային օր, մայրության և գեղեցկության տոնին, Հայոց ցեղասպանության օրվան , երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, Վարդավառ, ՀՀ Սահմանադրության օր, ՀՀ անկախության տոն, «Երևան 2800» տոնակատարություն: Կենտրոնների մի շարք խմբեր ակտիվ մասնակցել են «Երևանյան ամառ 2018» ծրագրով իրականացվող միջոցառումներին:	Հունվար-դեկտեմբեր	
<b>9.</b>	<b>Այլ մշակութային կազմակերպություններ</b>				
9.1	Համերգներին, փառատոներին, ցուցահանդեսներին մասնակցություն	Կապահովվի վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությունը փառատոներին, համերգներին, ցուցահանդեսներին	Ապահովվել է «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի, «ՀայԱրտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ի, «Յու.Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի, «Երևան» փողային նվագախմբի մասնակցությունը	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Նախատեսվում է մեծացնել հանրության հետ շփման շրջանակները, որը կխթանի կազմակերպությունների որակի բարձրացմանն ու հանրահոշակմանը:	փառատոններին, համերգներին, ցուցահանդեսներին ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Կազմակերպվել են տարաբնույթ մշակութային, ռուսուցողական, կրթական և այլ բնույթի ծրագրեր:		
10.	Կենդանաբանական այգում վերակառուցման ծրագրի իրականացում	2018թ. կենդանաբանական այգին կվերաբացվի նոր լուծումներով՝ էլ ավելի համապատասխանելով միջազգային չափորոշիչներին: Մասնավորապես կբացվի միջազգային չափորոշիչներին համապատասխան կառուցված առյուծների, արջերի և գայլերի նոր ազատավանդակները, ինչպես նաև կարանտինը: Միաժամանակ աշխատանքներ կիրականացվեն այգու՝ խիստ անհրաժեշտ պարսպապատման ուղղությամբ: Այգում աշխատանքներ են տարվելու կենդանիների բնական աճի և ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և նոր տեսակների ձեռքբերման և նոր տեսակների ապահովելու նպատակով: Նախատեսվում է «Երևանի կենդանաբանական այգում վայրի կենդանիների պահպանում, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացում ու ցուցադրում:	Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ բազմատեսակ շուու-ծրագրեր, մանկական խաղեր, մրցույթներ և այլն: Կազմակերպվել են մայրաքաղաքի արվեստի դպրոցների, նվագախմբերի, վոկալ ստուդիաների ու պարային համույթների սաների համերգային ելույթները: Կենդանաբանական այգում աշխատանքներ են տարվել կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և նոր տեսակների ապահովելու նպատակով ինչպես նաև այգում վայրի կենդանիների պահպանման, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացման ու ցուցադրման ուղղությամբ: Կենդանաբանական այգում իրականացվել են տարածքի, ազատավանդակների մասնակի վերանորոգման և վերականգնման աշխատանքներ: Ապահովվել է միջազգային ստանդարտներին համապատասխանող (արջերի, առյուծների և գայլերի) ազատավանդակների շահագործումը:	Հունվար-դեկտեմբեր	
11.	Էրեբունի-Երևան 2800-ամյակի իրերյանական	2018 թվականին Երևանի հիմնադրման 2800-ամյակի կապակցությամբ ողջ տարվա կտրվածքով մայրաքաղաքում, «Երևան 2800» տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքի բոլոր հատվածներում իրականացվել են բազմաբովանդակ և բազմաբնույթ մշակութային, կրթական-		3-րդ և 4-րդ եռամսյակներ	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

<p>միջոցառումներ</p>	<p>մարզերում և արտերկրում նախատեսվում են Երևանին նվիրված հրատարակչական միջոցառումներ, ծրագրեր ու ակցիաներ:</p> <p>«Էրեբունի Երևան 2800» տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքի բոլոր հատվածներում կիրականացվեն բազմաբովանդակ և բազմաբնույթ մշակութային, կրթական, ճանաչողական, գիտական ծրագրեր և միջոցառումներ, հրատարակչական, ֆիլատելիստական տոնական, հանդիսավոր համերգաշարեր:</p>	<p>ճանաչողական, գիտական ծրագրեր և միջոցառումներ, հրատարակչական միջոցառումներ, տոնական, հանդիսավոր համերգաշարեր: Մայրաքաղաքի ծննդյան տոների անբաժան ուղեկիցն են դարձել սիրված ու ճանաչված երաժշտախմբերի՝ բեմերի կատարումները: Հոբեյանական տոնակատարության առիթով այս տարի ծրագիրն ավելի հազեցած էր: Հյուսիսային պողոտայում կահավորված բեմահարթակից անցորդ երևանցիների ու մայրաքաղաքի բազմաթիվ հյուրերի համար էլույթ են ունեցել «Դր բեմը», «Գողթ» «Հայ մյուզիք» և այլ նվագախմբեր: Տոնական քայլերի մասնակից ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ՊՆ Վազգեն Մարգարյանի անվան ռազմական համալսարանի և ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի փողային նվագախմբերը կատարել են մայրաքաղաքին նվիրված հայտնի ու սիրված երգերի՝ մեղեդիներ: Մեկնարկելով Ազատության հրապարակից՝ փողային նվագախմբերի քայլերը եզրափակվել է Հանրապետության հրապարակում: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հարակից պուրակը մեկտեղել էր դասական երաժշտության սիրահարներին: Մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյակին նվիրված տոնական միջոցառումների ժամանակ էլույթ են ունեցել Հայաստանի պարի պետական, Երգի պետական համույթները, ինչպես նաև «Գութան», «Մարթուկ», «Ակունք», «Կարին», «Բերդ» և ազգագրական այլ խմբեր: «Երևան 2800» տոնական ծրագրով մայրաքաղաքի տարբեր հատվածներում տեղակայված բեմահարթակներում օրվա ընթացքում կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ: Հյուսիսային պողոտայում ներկայացվեց տարազանից ցուցադրություն՝ «Ուրարտուից մինչև օրս» խորագրով: Մայրաքաղաքի հիմնադրման 2800-ամյակի առթիվ</p>		
----------------------	--	--	--	--

			կազմակերպած տոնական բեմերից մեկն իր շուրջն էր համախմբել ռոք երաժշտության սիրահարներին: 2800-ամյա Երևանում հոբեյանական միջոցառումները շարունակվեցին նաև երեկոյան: Մայրաքաղաքը բնութագրող ու այցեքարտային վայրերից մեկում՝ Կասկադ համալիրում, ավանդույթի համաձայն, ջազի բեմահարթակն էր: Վաղ առավոտից Երևանի տարբեր հատվածներում 2800-ամյա Երևանի ծննդյան օրը խորհրդանշող տոնական միջոցառումներն ամփոփվել են Հանրապետության հրապարակում՝ գալահամերգով: Երևան քաղաքի պատմության թանգարանի սրահում կազմակերպվել է մայրաքաղաքի 2800-ամյա հոբեյանին նվիրված գիտաժողով:		
<b>Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական, հանրային միջոցառումների կազմակերպում	Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական և հանրային մարզական միջոցառումների կազմակերպում՝ ՀՀ Նախագահի մրցանակների համար մարզական մրցույթ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար «առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային առաջնություն, Երևան քաղաքի 36 առաջնություն, ուսումնամարզական 2 հավաք, Երևան և գործընկեր քաղաքների համագործակցության շրջանակում կազմակերպվող մարզաառողջարարական մարզական միջոցառում	Երևան քաղաքի «Հայաստան» մարզական միության մարզադաշտում կազմակերպվել է աթլետիկայի Երևան քաղաքի 2018թ. ձմեռային բաց առաջնությունը: Երևանի մարզատրամբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոցի մարզասրահում կազմակերպվել է ռենձյուի Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը: Երևանի մարզատրամբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոցի մարզասրահում կազմակերպվել է շաշկու Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը: Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցում կազմակերպվել է հանդբոլի Երևան քաղաքի առաջնությունը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100 և Երևանի հիմնադրման 2800 ամյակներին:	Աշխատակազմի սպորտի բաժին Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվող 2 միջոցառում:</p>	<p>Կազմակերպվել է վոլեյբոլի Երևան քաղաքի առաջնությունը նվիրված Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100 և Երևանի հիմնադրման 2800 ամյակներին:</p> <p>Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրում ներառված հունիսմեկյան մարզական միջոցառումներից առաջինը մեկնարկել է մայրաքաղաքի «Մպարտակ» մարզադահլիճում: «Առողջ Երևան» խորագրով մարզամշակութային տոնահանդեսն անցկացվել է 12 վարչական շրջանների մանկապարտեզների թիմերի մասնակցությամբ:</p> <p>Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Երևանի Իրինա Ռոդինայի գեղասահքի մարզադպրոցում առաջին անգամ կազմակերպվել էր «Ամառային սառույց» խորագրով տոնական ծրագիր:</p> <p>«Հրազդան» մարզադահլիճում անցկացվել է Բադմինթոնի Երևան քաղաքի պատանեկան առաջնություն:</p> <p>«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Ազատության հրապարակում տեղի է ունեցել վոլեյբոլ, բասկետբոլ, սուսերամարտ և հանդբոլ մարզաձևերի «Փորձիր քեզ մարզաձևերում» կարգախոսով միջոցառում:</p> <p>Անցկացվել է բասկետբոլի Երևան քաղաքի առաջնություն «Միկա» մարզադաշտում:</p> <p>Ծաղկաձորի օլիմպիական գլխավոր մարզահամալիրի մարզադաշտում անցկացվեց «Լավագույն մարզական ընտանիք 2018» մրցույթը:</p> <p>«Երևանյան ամառ 2018» միջոցառումների շրջանակում Մոնթե Մելքոնյան ճանապարհահատվածում անցկացվել են մոտոկրոսի և մոտոֆրիսթայլի ցուցադրական մրցումներ:</p> <p>«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Սևանա լճի առազաստային սպորտի «Երևան» ակումբի ջրային տարածքում անցկացվեց ջրային մարզաձևերի մրցումներ և ցուցադրական շոու:</p>		
--	---	--	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>Անցկացվեց մարզաառողջարարական ճանաչողական հետիոտն արշավ Գեղարքունիքի մարզի Օովինար գյուղի տարածքում:</p> <p>«Գրանդ սպորտ» մարզահամալիրում անցկացվեց լողափնյա վոլեյբոլի մինչև 16 տարեկանների Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը:</p> <p>Սևանա լճում անցկացվեց թիաբորդի Երևան քաղաքի պատանեկան առաջնությունը:</p> <p>Երևանի թիմը մասնակցել է Ծաղկաձոր քաղաքում անցկացված «Տարեցների հանրապետական խաղեր» մրցույթի 2018 թվականի եզրափակիչ փուլին և 2-րդ տարին անընդմեջ նվաճել հաղթողի կոչումը:</p> <p>Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոցում անցկացվել է երիտասարդների աշխարհի գավաթի առաջնություն՝ աղջիկների, տղաների և պարային զույգերի մասնակցությամբ:</p> <p>«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության մարզադաշտում անցկացվել է աթլետիկայի Երևան քաղաքի Բաց առաջնություն:</p> <p>Կազմակերպվել է «Ավիացիոն մարզաձևի Երևան քաղաքի առաջնություն Արզնի օդանավակայանում:</p> <p>«Միկա» մարզահամալիրում անցկացվել է Վահան Զատիկյանի անվան ըմբշամարտի 19-րդ միջազգային մրցաշարը:</p> <p>«Էրեբունի-Երևան 2800» տոնակատարությունների շրջանակներում «Էրեբունի-Երևան» գավաթի համար Կարապի լճի շրջակայքում անցկացվել են մրցումներ սթրիթբոլ, ռենձյու, նարդի, շաշկի, ըմբշամարտ, մարզաձևերից:</p> <p>Երևանյան լճում անցկացվել է ակադեմիական թիավարության, բայդարկաներով և կանոններով թիավարության Երևան քաղաքի առաջնություններ:</p> <p>«Միկա» մարզահամալիրում անցկացվել է ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ռուդոլֆ Կարապետյանի և ԽՍՀՄ</p>		
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>միջազգային կարգի սպորտի վարպետ Եղիշե Կարապետյանի անվան ազատ ոճի ըմբշամարտի տասներորդ միջազգային հուշամրցաշարը, որին մասնակցել են Երևանի և ՀՀ մարզերի, Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի ըմբիշները:</p> <p>Գուլֆի «Արարատ» ակումբի մարզադաշտում անցկացվել է Գուլֆի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության ըմբշամարտի մարզադահլիճում անցկացվել է ազատ և հունա-հռոմեական ըմբշամարտ մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ:</p> <p>Հրանտ Շահինյանի անվան մարզադպրոցի մարզադահլիճում անցկացվել է սկրոբատիկ մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>Երևանի հրաձգության մարզադպրոցում անցկացվել է գնդակային հրաձգության Երևան քաղաքի առաջնությունը:</p> <p>Մոնթե Մելքոնյան փողոցում անցկացվել է խճուղային հեծանվավազքի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>Երևանի Բաֆֆու անվան հիմնական դպրոցի մարզադահլիճում անցկացվել է սեղանի թենիսի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Դինամո» մարզադահլիճում անցկացվել է ձյուդոյի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Երևանի ազգայի կոլի ըմբշամարտի մարզաակումբ» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սամբոյի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է Երևանի հատուկ դպրոցների թիմերի ֆուտբոլի մրցաշար:</p> <p>«Սպիտակ» մարզաառողջարարական համալիրի լողավազանում անցկացվել է լողի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է</p>		
--	--	--	--	--

		<p>Ֆուտզալի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի մարզադահլիճում անցկացվել է գեղարվեստական մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության ՕՀ մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սպորտային մարմնամարզության Երևան քաղաքի բաց առաջնություն:</p> <p>Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության դահլիճում կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործությունների ցուցահանդես՝ համերգային ծրագրի ուղեկցությամբ, որին մասնակցել են Երևանի և ՀՀ այլ քաղաքների հաշմանդամություն ունեցող ստեղծագործող անձինք:</p> <p>«Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սուսերամարտի Երևան քաղաքի բաց առաջնություն:</p> <p>«Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է նետաձգության Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է ֆուտբոլի սիրողական թիմերի մրցաշար:</p> <p>«Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է սպորտային պարերի Երևան քաղաքի առաջնություն:</p> <p>«Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճում անցկացվել է Երևան քաղաքի ուսումնարանների և քոլեջների ուսանողների մասնակցությամբ սպարտակիադա՝ վոլեյբոլ և բասկետբոլ մարզաձևերից:</p>		
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			«Միկա» մարզադահլիճում անցկացվել է բասկետբոլի Երևան քաղաքի պատանեկան առաջնություն:		
2.	Երևան-Ստեփանակերտ, Երևան-Մոսկվա քաղաքների համագործակցության ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացում:	Երևան-Ստեփանակերտ, Երևան-Մոսկվա և Երևան-Մանկտ-Պետերբուրգ քաղաքների համագործակցության ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացում:	«Մոսկվայի օրերը Երևանում» միջոցառումների շրջանակում անցկացվել է շախմատի, ազատ ոճի և հունա-հռոմեական ոճերի ըմբշամարտի պատանեկան խաղեր Արաբկիրի շախմատի մարզադպրոցում, Հայաստան մարզական ընկերության ըմբշամարտի մարզադահլիճում:  «Երևան - Ստեփանակերտ պատանեկան մարզական խաղեր» միջոցառումը՝ հյուրընկալելով Ստեփանակերտի 33 անձից բաղկացած մարզական պատվիրակությանը՝ բասկետբոլ և հանդբոլ մարզաձևերից անցկացվել է «Միկա» մարզադահլիճում:	Հոկտեմբերի 4-7	Հոկտեմբերի 29-31
3.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզամշակութային միջոցառումների կազմակերպում	Հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզամշակութային միջոցառումների կազմակերպում:	«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Ազատության հրապարակում անցկացվել է մարզական սպարտակիադա, որին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 90 մարզիկներ՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շոու դաուն, սայլակավազք և շախմատ, վոլեյբոլ, բազկամարտ, բոչա, ծանրաձողի հրում պատկած դիրքից (փաուերլիֆթինգ) մարզաձևերից:  Իրինա Ռոդինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվում են շուրջ 15 հոգուց բաղկացած տափօղակով հոկեյի թիմի կանոնավոր մարզումներ:  «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում մայրաքաղաքի Իրինա Ռոդինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվել է հաշմանդամություն ունեցող անձանց պարահոկեյի ցուցադրական խաղ:  Օադկաձորի գլխավոր մարզահամալիրում անցկացվել է «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի՝ եզրափակիչ փուլը: Մրցույթն անցկացվել է 7 մարզաձևերից՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, շաշկի, դարթս, բազկամարտ և եռամարտ մարզաձևերից՝ լսողական,	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			տեսողական, հենաշարժային խնդիրներ և մտավոր սահմանափակումներ ունեցող հաշմանդամների մասնակցությամբ: Միջազգային պարաօլիմպիկ կոմիտեի կողմից Իրինա Ռոդինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվել է հաշմանդամների պարահոկեյի վերապատրաստման դասընթացներ:	
4.	Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում Երևան քաղաքի հավաքական թիմերի, Երևանյան թիմերի ու մարզիկ-մարզուհիների մասնակցության ապահովում	Երևան քաղաքի հավաքական թիմերի, Երևանյան թիմերի ու մարզիկ-մարզուհիների մասնակցության ապահովում Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում:	«Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզուհիները մասնակցել են Իսրայելի Ռիոն Լե Ջիոն քաղաքում անցկացված «9th Israjel Junior» միջազգային մրցաշարին, որտեղ Գայանե Մամաջանյանը հաջողությամբ նվաճել է բրոնզե մեդալ: Ֆուտբոլի, բասկետբոլի և աթլետիկայի Երևան քաղաքի հավաքական թիմերը մասնակցել են Հայաստանի Հանրապետության առաջնություններին: Երևանի Մալաթիա-Մեբաստիայի մանկապատանեկան համալիր մարզադպրոցի 2 սամբիստներ գործուղվել են Չեխիայի Պրահա քաղաք՝ մասնակցելու Եվրոպայի սամբոյի առաջնությանը: Բասկետբոլի, ֆուտբոլի, խոտի հոկեյի և աթլետիկայի Երևան քաղաքի պատանեկան հավաքական թիմերը գործուղվել են ՀՀ մարզեր մասնակցելու ՀՀ առաջնություններին: «Իրինա Ռոդինայի գեղասահքի մարզադպրոցի սաները Հունգարիայի Միսկոլկ քաղաքում մասնակցել են գեղասահքի միջազգային մրցաշարի, որտեղ գրանցել են հաջողություններ: Թբիլիսի է գործուղվել վոլեյբոլի Երևան քաղաքի կանանց հավաքական թիմը: Երևանի Աջափնյակի մանկապատանեկան համալիր	Հունվար-դեկտեմբեր

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>մարզադպրոցի, Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի և Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի հանդբոլի աղջիկների թիմերը գործուղվել են Վանաձոր մասնակցելու հանդբոլի աղջիկների ՀՀ առաջնությանը:</p> <p>Երևանի ենթակայության մարզադպրոցների վոլեյբոլի 4 թիմերը մասնակցել են Վանաձորում կայանալիք Ֆելիքս Դալլաքյանի հիշատակին նվիրված 2003-2004թթ. ծնված պատանիների և աղջիկների վոլեյբոլի հուշամրցաշարին:</p> <p>ՌԴ Դոնի-Ռոստով քաղաքում անցկացվեց ֆուտբոլի միջազգային մրցաշար, որտեղ մասնակցում էր «Երևան» թիմը:</p> <p>Երևան քաղաքի ակրոբատիկայի հավաքական թիմը մեկնել է Բաթումի՝ մասնակցելու Աջարիայի Ակրոբատիկ մարմնամարզության բաց առաջնությանը:</p> <p>Երևանի կենտրոնում գտնվող Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահի տարածքում ռուսական շաշկու միջազգային ֆեդերացիայի և շաշկու ՀՀ ֆեդերացիայի համատեղ ջանքերով առաջին անգամ կազմակերպվել է ռուսական շաշկու միջազգային մրցաշար «ՀԱՅԱՍՏԱՆ-2018»:</p> <p>Թուրքիայի Ստամբուլ քաղաք է գործուղվել Երևանի Մալաթիա-Սեբաստիայի մանկապատանեկան համալիր մարզադպրոցի 1 ըմբիշ՝ մասնակցելու մինչև 23 տարեկանների Եվրոպայի առաջնությանը:</p> <p>Ա. Ազարյանի անվան մարմնամարզության ՕՀ մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է «Ալբերտ Ազարյանի գավաթ» միջազգային մրցաշարը:</p> <p>Ուկրաինայի Խարկով քաղաք է գործուղվել լողափնյա վոլեյբոլի Երևան քաղաքի հավաքական թիմը՝ մասնակցելու Արևելյան Եվրոպայի երկրների պատանեկան առաջնությանը:</p>		
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>Երևանի պետական համալսարանի մարզադահլիճում առաջին անգամ անցկացվեց Հայաստանի ցատկացանցի բաց առաջնություն, որին մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի և Վրաստանի մոտ 90 մարզիկ-մարզուհիներ:</p> <p>Իրինա Ռոդինայի անվան գեղասահքի մարզադպրոցում անցկացվեց «Երևանյան գիշերներ» հոկեյի միջազգային մրցաշար՝ Ռուսաստանի ընկերական լիգայի և Երևանի հոկեյի թիմի մասնակցությամբ:</p> <p>Թուրքիայի Ստամբուլ քաղաք է գործուղվել գեղարվեստական մարմնամարզության Երևան քաղաքի հավաքական թիմը:</p> <p>«Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների բասկետբոլի թիմերը մասնակցել են Եղվարդ, Արմավիր, Գյումրի և Վանաձոր քաղաքներում անցկացված 2006-2007թթ. ծնված պատանիների և 2004-2005թթ. ծնված աղջիկների 2018-2019թթ. բասկետբոլի կանոնավոր առաջնության նախընտրական փուլին:</p> <p>Երևանը ներկայացնող 3 թիմեր գործուղվել են Հայաստանի տարբեր քաղաքներ՝ մասնակցելու բասկետբոլի առաջնություններին:</p>		
5.	Երևանի թիմերի և Երևանցի մարզիկների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում	Հանրապետական ու միջազգային մրցաշարերին, առաջնություններին նախապատրաստվելու և պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով Երևանի և Երևանցի մարզիկ-մարզուհիների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում:	Բասկետբոլի Երևան քաղաքի կանանց և տղամարդկանց հավաքական թիմերի համար Վանաձորում անցկացվել է ուսումնամարզական հավաք: <p>Վանաձոր քաղաքի մարզաբազայում Երևան քաղաքի թիմի համար անցկացվել է ակրոբատիկ մարմնամարզության ուսումնամարզական հավաք:</p>	Մայիսի 22-31	
6.	«Առողջ սերունդ՝ պաշտպանված»	Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար անցկացվող «Առողջ	Երևանի քաղաքապետարանի «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով մեկնարկվել է «Առողջ	2-րդ, 3-րդ եռամսյակներ	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>«հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի կազմակերպում</p>	<p>սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ավանդական կազմակերպում:</p>	<p>«սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական մարզական մրցաշարը: Մանկական զբոսայգում անցկացվեց «Երևանի թռչող գնդակ» վոլեյբոլի բակային առաջնությունը:          Թումոյի այգու մարզադաշտում անցկացվեց «Երևանի կաշվե գնդակ» ֆուտբոլի բակային առաջնությունը:          Թումոյի այգու մարզադաշտում անցկացվեց Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար անցկացվող «Երևանի ոսկե գամբուլ» բասկետբոլի բակային առաջնությունը:          Թումոյի այգու մարզադաշտում անցկացվեց «Երևանի սրբնթաց գնդակ» հանդբոլի բակային առաջնությունը:          Մանկական զբոսայգում անցկացվեց Երևանի քաղաքապետարանի «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի «Շախմատային Երևան 2800» շախմատի առաջնությունը:          Մանկական զբոսայգում անցկացվեց Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար շաշկու բակային առաջնությունը:          «Երևանյան ամառ 2018» միջոցառումների շրջանակում մանկական զբոսայգում անցկացվեց եռանարդու ցուցադրական մրցաշար:          «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրով կազմակերպվել է աթլետիկայի առաջնությունը:</p>		
7.	<p>Բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում</p>	<p>Երևանի քաղաքապետի մրցանակների սահմանում միջազգային հանրապետական մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսման նպատակով:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական մարզական մրցաշարի բոլոր հաղթողներին հանձնվել են գավաթներ, իսկ ընդհանուր հաշվարկով հաղթած վարչական շրջանի թիմը պարգևատրվել է Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթով:          Պարևատրվել են Ծաղկաձորի օլիմպիական գլխավոր մարզահամալիրի մարզադաշտում կայացած «Լավագույն մարզական ընտանիք-2018» մրցույթի հաղթող Երևանի թիմի</p>	<p>Հուլիս-Օգոստոս</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

8.	Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովելու աշխատանքների իրականացում	Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման գործընթացի շարունակականության ապահովում:	<p>մասնակից ընտանիքներն ու մարզիչները:</p> <p>1.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/192-2 2.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/192-3 3.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/192-1 4.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/168-1 5.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/193-1 6.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/193-2 7. N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185-1 8.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/185-2 9.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/168-2 10.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/183-2 11.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/183-1 12.N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/183-3</p> <p>Երևանի ենթակայության մարզադպրոցներից ընդունվել են գույքի անհրաժեշտ հայտեր՝ ՀՀ Գնումների օրենսդրության համաձայն մարզական արտադրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման գործընթաց սկսելու նպատակով:</p> <p>ՀՀ Գնումների օրենսդրությամբ սահմանված մցութային կարգով, Երևանի ենթակայության արտադրոցական կազմակերպությունների համար ձեռք է բերվել գույք այն է՝ մարզագույք, կահույք, էլեկտրոտեխնիկա, բժշկական սարքավորումներ և այլն: Գույքը հանձնվել է Երևանի ենթակայության մարզական կազմակերպություններին:</p>	<p>1. «Սմարթլայն» ՍՊԸ 29.05.2018թ. 2.«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ 29.05.2018թ. 3.«Ֆոտոն» ՍՊԸ 29.05.2018թ. 4.«Դառես» ՍՊԸ 01.06.2018թ. 5.«Էլկոմպ» ՍՊԸ 01.06.2018թ. 6. «Զավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ 01.06.2018թ. 7.«Տիգրան գրուպ» ՍՊԸ 06.06.2018թ. 8.«Բրուս» ՍՊԸ 06.06.2018թ. 9.«Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՀ» ՍՊԸ 06.06.2018թ. 10. «Լուսա» ՍՊԸ 12.06.2018թ. 11.«Սպորտ Սիթի» ՍՊԸ 12.06.2018թ. 12. «Բրուս» ՍՊԸ 14.06.2018թ.</p>	
9.	Համահայկական երկրորդ ձմեռային խաղերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում	Համահայկական երկրորդ ձմեռային խաղերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում, այդ թվում՝ ըստ մարզաձևերի ընտրական մրցաշարերի անցկացում, հավաքական թիմերի ձևավորում, հավաքականների	Համահայկական ձմեռային խաղերը 2018թ. չեն կայացել համաշխարհային կոմիտեի որոշման համաձայն, ինչի հետ կապված երևանյան թիմեր չեն ձևավորվել:		

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		համար ուսումնամարզական հավաքների անցկացում, միասնական մարզահանդերձանքով ապահովում և մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցության իրականացում:			
10.	Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպություններում իրականացվող գործընթացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխանության նկատմամբ վերահսկողության իրականացում	Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպություններում իրականացվող գործընթացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխանության նկատմամբ վերահսկողության իրականացում:	Կազմվել ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն է ուղարկվել Երևանի ենթակայության մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների՝ վերապատրաստման դասընթացների մասնակցելու վերաբերյալ տեղեկատվություն: Երևանի ենթակայության շախմատի մարզադպրոցների մասնակցել են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում անցկացվող վերապատրաստման դասընթացներին՝ համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմած ժամանակացույցի: Ապահովվել է Երևանի ենթակայության մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների մասնակցությունը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում անցկացվող վերապատրաստման դասընթացներին՝ բաղմինթոն, աթլետիկա ազատ ոճի ըմբշամարտ, հունա-հռոմեական ըմբշամարտ, հայկական ազգային կռիւ ըմբշամարտ և ձյուդո մարզաձևերից: Անցկացվել են խորհրդակցություններ վարչական շրջանների համապատասխան մասնագետների և Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տնօրենների հետ, իրականացվել են ստուգայցեր մարզադպրոցներ:	Հունվար-դեկտեմբեր	
<b>Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ</b>					
<b>Հ/հ</b>	<b>Ծրագրի կամ միջոցառման</b>	<b>Նախատեսված աշխատանքների նկարագիր</b>	<b>Աշխատանքների իրականացման գործընթաց</b>	<b>Իրականացնող կազմակերպություն,</b>	<b>Նշումներ</b>

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	անվանումը			կատարման ժամկետ	
1.	Սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում	Սոցիալական հոլովակների պատրաստում և տարածում:	ԵՔ-ԲՄՇՁԲ-18/69-2 27.02.2018թ. Կազմակերպվել է սոցիալական հոլովակների պատրաստման և այդ հոլովակների հանրայնացման աշխատանքներ:	Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին Ա/Ձ Արարատ Ղուկասյան Ապրիլ	
2.	Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքների կազմակերպում	Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքների կազմակերպում բոլոր վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար:	Կազմակերպվել են ծնողավարման հմտությունների վերաբերյալ սեմինար պարապմունքներ Երևանի 12 վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար, ընտանիքների տրամադրվել է սննդի փաթեթներ:	մարտ	
3.	«Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքիների խրախուսման միջոցառումների կազմակերպում	«Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքիների խրախուսման միջոցառումների կազմակերպում:	Իրականացվել է միջոցառում «Ընտանիքի միջազգային օրվա» կապակցությամբ՝ Երևանի խնամատար ընտանիքիների մասնակցությամբ, որի ավարտին երեխաներին տրամադրվել են նվերներ, ծնողներին՝ ծաղկեփնջեր:	Մայիս	
4.	Աջափնյակ վարչական շրջանի ցերեկային խնամքի հաստատության և Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի երեխաների համար գիտակրթական ֆիլմերի ցուցադրության կազմակերպում:	Աջափնյակ վարչական շրջանի ցերեկային խնամքի հաստատության և Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի երեխաների համար գիտակրթական ֆիլմերի ցուցադրության կազմակերպում:	Աջափնյակ վարչական շրջանի ցերեկային խնամքի հաստատության, Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի և հ. 2 հատուկ դպրոցի երեխաների համար իրականացվել է դպրոցական պլանիտարում: Միջոցառման ընթացքում իրականացվել է հայերեն լեզվով ֆիլմերի դիտում՝ շրջակա աշխարհի, աստղագիտության և կենսաբանականության վերաբերյալ:	սեպտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

5.	Այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ	Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ:	Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ իրականացվել են՝ <ul style="list-style-type: none"> <li>• այցելություններ Երևանի ծննդատներ /նվերների, ծաղկեփնջերի տրամադրում/,</li> <li>• այցելություններ «Երևանի մանկան տուն» և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» հեքիաթի հերոսների մասնակցությամբ /նվերների տրամադրում/,</li> <li>• կազմակերպվել է հատուկ կարիքներով երեխաների մասնակցությամբ միջոցառում /նվերների տրամադրում/:</li> </ul>	Մայիս 25-Հունիսի 1	
6.	Հատուկ կարիքներով երեխաների այցելությունների կազմակերպում թանգարաններ	Հատուկ կարիքներով երեխաների այցելությունների կազմակերպում թանգարաններ:	Հատուկ կարիքներով երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է այցելություններ Երևան քաղաքի թանգարաններ և Ազգային պատկերասրահ:	Ապրիլ	
7.	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար թեմատիկ սեմինարների կազմակերպում	Բոլոր վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար թեմատիկ սեմինարների կազմակերպում:	Կազմակերպվել է սեմինար՝ միգրացիոն օրենսդրության բարեփոխումների և ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին ՀՀ օրենքի և ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ, որին մասնակցում էին Երևան քաղաքի 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամները և սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցները:	մարտ	
8.	Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում	Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում հատուկ կարիք ունեցող շնորհալի և տաղանդավոր երեխաների մասնակցությամբ:	Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան նվիրված կազմակերպվել է միջոցառում /ձեռքի աշխատանքների և լուսանկարների ցուցահանդես/ և այցելություն Երևանի տիկնիկային թատրոն՝ հատուկ կարիք ունեցող շնորհալի և տաղանդավոր երեխաների մասնակցությամբ:	Դեկտեմբեր	
9.	Առանց ծնողական խնամքի մնացած		Հայտնաբերվել և հաշվառման են վերցվել առանց ծնողական խնամքի մնացած և առանց ծնողական խնամքի մնացած	տարվա ընթացքում	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	Երեխաների հայտնաբերում, հաշվառում, կարիքների գնահատում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման ապահովում:		Երեխաների թվին պատկանող 91 երեխա, իրականացվել է կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ՝ մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով:		
10.	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում քաղաքում		Երեխաների տվյալների շտեմարանում մուտքագրվել է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 111 երեխայի տվյալ:	տարվա ընթացքում	
11.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրում		Հիմք ընդունելով ծնողի դիմումը և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի եզրակացությունը՝ վկայագրվել է 670 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:	տարվա ընթացքում	
12.	Մանկատների բեռնաթափման նպատակով խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցություն:		«Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգի» համաձայն տրվել է 9 եզրակացություն խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին, կնքվել է 11 պայմանագիր Երևանի քաղաքապետի և խնամատար ծնողի միջև:	տարվա ընթացքում	
13.	Մանկատների բեռնաթափման, երեխայի		Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին	տարվա ընթացքում	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով որդեգրման հնարավորության մասին եզրակացության տրամադրման գործընթացի իրականացում:</p>		<p>տրամադրվել է 40 դրական եզրակացություն:</p> <p>23 օտարերկրյա քաղաքացու տրվել է խորհրդատվություն՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին եզրակացություն ստանալու վերաբերյալ և ուղղորդվել ՀՀ արդարադատության նախարարություն:</p> <p>Ներկայացված փաստաթղթերի, որդեգրման վերաբերյալ դրական եզրակացությունների հիման վրա հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 65 անձ:</p> <p>10 քաղաքացու դիմումի հիման վրա կատարվել է հարցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ որդեգրման նպատակով երեխայի ընտրության վերաբերյալ:</p> <p>Որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառման վերցված 60 անձանց տրվել է որդեգրման ենթակա երեխաների ցանկ:</p> <p>Իրականացվել է վերահսկողություն Երևան քաղաքում որդեգրողների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ /6 ընտանիք/:</p>		
14.	<p>Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տեղավորում խնամքի և պաշտպանության հաստատություններում և այդ հաստատություններից դուրսգրում:</p>		<p>Վարչական շրջաններից ստացված գրությունների, ծնողների դիմումների, ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև կենսապայմանների ուսումնասիրման արդյունքների հիման վրա 57 երեխա տեղավորվել է մանկատուն, տրվել է մանկատանից դուրսգրման մասին 19 եզրակացություն:</p>	տարվա ընթացքում	
15.	<p>Միջազգային և տեղական հասարակական կառուցների և կազմակերպությունն</p>		<p>Իրականացվել է համագործակցություն «Մեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի, «ՀՕՄ»-ի, Վորլդ Վիժն Հայաստան միջազգային կազմակերպության, «Քաղաքացիական հասարակական ինստիտուտ» ՀԿ-ի, ՄԱԿ-ի գրասենյակի, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական</p>	տարվա ընթացքում	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

<p>երի հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների իրականացում:</p>		<p>հիմնադրամի, «Յունիսեֆ»-ի, «Հայ մայրեր» ՀԿ-ի, «Բարի մամա» ՀԿ-ի, «4ՖԵՄ» կանանց իրավապաշտպան հասարակական կազմակերպության, ԱՄԿ Երևանի գրասենյակի, «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» ՀԿ-ի, ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամի, Երևանի մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության այլ հաստատությունների, ՀՀ ոստիկանության ԱԳ բաժինների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և արդարադատության նախարարությունների համապատասխան բաժինների հետ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների խնդիրների ուսումնասիրման և հետագա խնդիրների կանխարգելման նպատակով:</p>		
<p>16. Անչափահասների կողմից իրավախախտումներ, մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման, հիմնախնդիրների լուծման նպատակով ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների և ԽՀՀ-ների հետ համագործություն, վարքային խնդիրներ ունեցող, հակասոցիալական վարք դրսևորած երեխաների</p>		<p>ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի կողմից ստացված տեղեկատվություն համաձայն անչափահաս մուրացիկ և թափառաշրջիկ 25 երեխաների տվյալներ փոխանցվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին՝ ընտանիքներին հնարավորինս աջակցելու և հետագայում մուրացիկության դեպքերը կանխարգելելու համար:</p> <p>ՀՀ ոստիկանությունից ստացված փաստաթղթերի և ծնողի դիմումի հիման վրա 2 երեխայի տրվել է «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված</p> <p>լինելու մասին տեղեկանք, որի հիման վրա վերջինս տեղավորվել է Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիր:</p>	<p>տարվա ընթացքում</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	կողմնորոշում և տեղավորում				
17.	Որդեգրման ենթակա երեխաների հաշվառում՝ անձնական քարտի լրացում, անձնական գործի կազմում և կենտրոնացված հաշվառման ներկայացում		ՀՀ կառավարության 18.03.2010թ. հ. 269-Ն որոշմամբ հաստատված Որդեգրման կարգի համաձայն, հաշվառվել է որդեգրման ենթակա 53 երեխա, դատարանի վճիռների հիման վրա՝ հաշվառումից հանվել է որդեգրման ենթակա 15 երեխա:	տարվա ընթացքում	
<b>Միջազգային համագործակցություն</b>					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված աշխատանքներ	Նախատեսվում է իրականացնել Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնական միջոցառումների մեծածավալ նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ:	<ol style="list-style-type: none"> <li>1. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-5</li> <li>2. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-3</li> <li>3. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-2</li> <li>4. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-1</li> <li>5. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/97-4</li> <li>6. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/98-1</li> <li>7. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/98-2</li> <li>8. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/98-3</li> <li>9. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-1</li> <li>10. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-2</li> <li>11. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-3</li> <li>12. N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/99-4</li> <li>13. N ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/8</li> <li>14. N ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/9</li> </ol> <p>Պատրաստվել և ուղարկվել են Երևանի 2800-ամյակի տոնակատարությունների մասնակցության հրավերները Երևանի քույր և գործընկեր քաղաքներին: Իրականացվել են Երևանի 2800-ամյակի կապակցությամբ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ֆ/Ա Անի Մանուկյան</li> <li>2. Ֆ/Ա Արմեն Իսրայելյան</li> <li>3. Ֆ/Ա Սյուզան Ղարոյան</li> <li>4. Ֆ/Ա Աննա Մանուկյան</li> <li>5. Ֆ/Ա Անի Հովակիմյան</li> <li>6. «Իմպերիալ Պալաս Հոթել» ՍՊԸ</li> <li>7. «Երևան հյուրանոց» ԲԲԸ</li> <li>8. «Մետրոպոլ» ՍՊԸ</li> <li>9. «Արիես Քեյթրինգ Սերվիս» ՍՊԸ</li> <li>10. «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ</li> <li>11. «Տոսպիա» ՍՊԸ</li> <li>12. «Ուրարտու ռեստորան»</li> <li>13. Ա/Ձ Վիկտոր Միրումյան</li> </ol>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>Երևան ժամանած քույր և գործընկեր քաղաքների պատվիրակությունների այցի նախապատրաստական, այցի ծրագրի կազմակերպչական աշխատանքներ:</p> <p>Մի շարք քաղաքներում ՀՀ դեսպանությունների հետ համատեղ կազմակերպվել են Երևանի 2800-ամյակին նվիրված ցուցահանդեսներ:</p> <p>Նախապատրաստական աշխատանքներ են տարվել Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի ընթացքում «Երևան-2800 ցուցահանդես»-ի կազմակերպման ուղղությամբ: Ցուցահանդեսը հանվել է ընդհանուր ծրագրից և դրանով պայմանավորված չի իրականացվել:</p>	14. «Է.Ֆ.Ղ.» ՄՊԸ Հունվար-դեկտեմբեր	
2.	Բանակցություններ ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ	Կվարվեն բանակցություններ ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ:	<p>Աշխատանքներ են իրականացվել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ հետ՝ GIZ-ի կողմից իրականացվող «Էլ. կառավարումը Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի շրջանակներում:</p> <p>«Էլ-կառավարումը քաղաքացիակենտրոն և թափանցիկ վարչարարության գործընթացների համար» ծրագրի շրջանակներում ձևավորված աշխատանքային խմբերի հանդիպմանը մասնակցելու նպատակով 2018թ. ապրիլի 16—ից 19-ը Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները գործուղվել են Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի, իսկ 2018թ. նոյեմբերի 5-ից 8-ը՝ Ուկրաինայի մայրաքաղաք Կիև:</p>	Հունվար-դեկտեմբեր	
3.	Աջակցություն ներդրումային միջազգային ցուցահանդեսների մասնակցության ապահովման և գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների համար:	Կիրականացվի ներդրումային ցուցահանդեսներին ապահովման և գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպման համար:	Բանակցություններ են իրականացվել Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ՝ ներդրումային միջազգային ցուցահանդեսներին Երևանի մասնակցության ապահովման և գործընկեր քաղաքներում ներդրումային կազմակերպման համար:	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	կազմակերպման համար				
4.	Համագործակցություն միջազգային և տարածաշրջանային կառույցների, սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ	Կակտիվացվի համագործակցությունը միջազգային և տարածաշրջանային կառույցների, սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:	Աշխատանքներ են իրականացվել Երևան ՏարագՖեստ 2018 ազգային տարազի 4-րդ միջազգային փառատոնին ՀՀ-ում կազմակերպված ներկայացուցչությունների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:	Հունվար-դեկտեմբեր	
5.	Տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքներ	Կակտիվացվեն տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները:	N ԵՔ-ՄԱՕՁԲ-18/88 Աշխատանքներ են իրականացվել ՉԺՀ Ցինդայի քաղաքապետարանի հետ՝ Ցինդա քաղաքից գործարարների Երևան կատարելիք այցի առնչությամբ: Այցը կայացել է, Երևանի քաղաքապետարանում տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ, ներկայացվել են Երևան քաղաքի ներդրումային ծրագրերը:	«Դեմգո» ՍՊԸ Օգոստոս	
6.	Երևանի քույր և գործընկեր քաղաքներին միջոցառումների և փառատոնների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	Կտրամադրվի տեղեկատվություն Երևան քաղաքում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ Երևանի քույր և գործընկեր քաղաքներին, ինչպես նաև կակտիվացվեն կապերը Երևանի քաղաքապետարանի ու քույր և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև՝ զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով:	Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Երեբունի-Երևան 2800-ամյակի միջոցառումների շրջանակում «Երևանը՝ ուրարտական ժառանգության համատեքստում» գիտաժողովի և «Խելացի քաղաքներ. նոր հնարավորություններ և հեռանկարներ» միջազգային ֆորումի անցկացված ցանցակցական վերաբերյալ:		Ընդհանուր ծրագրից այս համաժողովը հանելու հիմքով չի իրականացել:
7.	Եղբայրության պուրակների և	Նախատեսվում է իրականացնել եղբայրության պուրակներ և	Բանակցություններ են իրականացվել մի շարք քաղաքների հետ՝ փողոցների, պուրակների և զբոսայգիների «Երևան»	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	զբոսայգիների հիմնում	զբոսայգիներ հիմնելու ծրագրեր:	անվամբ անվանակոչման նպատակով:		
8.	Վարչական շրջանների և գործընկեր քաղաքների միջև համագործակցության ծավալում	Կիրախուսվեն և կընդլայնվեն վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունները:	Նախապատրաստատական աշխատանքներ են տարվել Արաբկիր վարչական շրջանի պատվիրակության այցը Պլեսսի-Ռոբինսոն կազմակերպելու ուղղությամբ: Նախապատրաստատական աշխատանքներ են տարվել Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակության այցը Չուվաշիայի Հանրապետության մայրաքաղաք Չեբոքսար կազմակերպելու ուղղությամբ:	ապրիլի 5-ից 10-ը  օգոստոսի 17-ից 20-ը	
9.	Համագործակցության ակտիվացում արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Մոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ և այլն/:		<ol style="list-style-type: none"> <li>1. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/34</li> <li>2. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/63-2</li> <li>3. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/63-3</li> <li>4. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/63-1</li> <li>5. ԵՔ-ՄԱԱՊՁԲ- 18/4</li> <li>6. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/65-2</li> <li>7. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/60</li> <li>8. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/62</li> <li>9. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/5-2</li> <li>10. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/60</li> <li>11. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/2-3</li> <li>12. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/2-2</li> <li>13. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/3</li> <li>14. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/64-2</li> <li>15. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/2-1</li> <li>16. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/1</li> <li>17. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/64-3</li> <li>18. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/64-1</li> <li>19. ԵՔ-ՄԱԱՊՁԲ-18/5-1</li> <li>20. ԵՔ-ՄԱԾՁԲ-18/65-1</li> <li>21. ԵՔ-ՄԱԾՁԲ 18/75</li> </ol> <p>2018թ. մայիսի 26-ից 27-ը Երևանի քաղաքապետի տեղակալ Դ. Օհանյանի գլխավորած պատվիրակությունը</p>	<p>1.Ֆ/Ա Ա. Ալոն</p> <p>2.Ֆ/Ա Ա. Ալոն</p> <p>3.Ֆ/Ա Ա. Մանուկյան</p> <p>4.Ֆ/Ա Է. Երիցյան</p> <p>5/Ֆ/Ա Արամ Տեր-Վարդանյան</p> <p>6.Արիես Քեյթրինգ Սերվիս</p> <p>7.Ֆրիդե ՍՊԸ</p> <p>8.ԲԱՍ ԼԵՆԴ ՍՊԸ</p> <p>9.Բիզնես Սթայլ ՍՊԸ</p> <p>10.Երևան Հյուրանոց ԲԲԸ</p> <p>11.Ա/Ձ Կարինե Աճեմյան</p> <p>12.Ֆ/Ա Կարինե Ներսիսյան</p> <p>13.«Միկրոալֆաե ՍՊԸ</p> <p>14.ԴեմոՍՊԸ</p> <p>15.Ֆ/Ա Սպարտակ Գևորգյան</p> <p>16.Շշուկ ՍՊԸ</p> <p>17.Հայր և որդի Երեմյաններե ՍՊԸ</p> <p>18.Տոսպիա ՍՊԸ</p> <p>19.Յունիպրինտե ՍՊԸ</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>մասնակցեց Սանկտ Պետերբուրգի 315-ամյակին նվիրված միջոցառումներին:</p> <p>2018թ.-ի հունիսի 26-28-ը կազմակերպվել են Սանկտ Պետերբուրգի օրերը Երևանում, որի շրջանակներում համաձայնագրեր են ստորագրվել դպրոցների միջև: Վարպետության դասընթացներ են անցկացվել Սանկտ Պետերբուրգից ժամանած երաժիշտների կողմից և կազմակերպվել է համատեղ համերգային ծրագիր: Բուժհաստատություններում կազմակերպվել են կլոր սեղաններ, հիվանդների հետազոտություններ և բժշկական խորհրդատվություններ: Տեղի է ունեցել սանկտպետերբուրգյան «Էսսե կվինտետ» համույթի համերգը: Կազմակերպվել են կլոր սեղաններ զբոսաշրջության, կրթության և առևտրատնտեսական համագործակցության ոլորտներում:</p> <p>Նախապատրաստվել և կազմակերպվել է 2018թ.-ի հոկտեմբերի 16-17-ը Երևանի քաղաքապետի այցը Փարիզ՝ մասնակցելու TUMO-Փարիզի բացման արարողությանը:</p> <p>2018թ. նոյեմբերի 25-ից 29-ը կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանի գործուղումը Մոսկվա երկկողմ համագործակցության հարցերի քննարկման նպատակով:</p> <p>Երևանի և Մոսկվա քաղաքների գործադիր իշխանության մարմինների միջև 2018-2021թթ. համար համագործակցության ծրագրի շրջանակներում 2018թ. դեկտեմբերի 17-ից 19-ը Երևանում անց են կացվել Մոսկվայի մշակույթի օրերը, որոնց շրջանակներում կազմակերպվել են կլոր սեղան, համերգ, ստեղծագործական երեկո:</p>	<p>20.ՈՒՐԱՐՏՈՒ ՌԵՍՏՈՐԱՆԵ ՄՊԸ 21.«Երևան հյուրանոցե ԲԲԸ Հունվար-հունիս</p>	
10.	Համագործակցության համաձայնագրերի թարմացում	Կթարմացվեն համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի,	Աշխատանքներ են իրականացվել ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ:	Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ՝ համագործակցության համաձայնագրերի թարմացման ուղղությամբ: Բանակցություններ են վարվել նաև Աթենքի քաղաքապետարանի հետ՝ ստորագրված համաձայնագրի թարմացման նպատակով:		
11.	Համագործակցության համաձայնագրերի ստորագրում	Նախատեսվում է համագործակցության համաձայնագրերի ստորագրում Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Հունաստանի Ալեքսանդրապոլիս, Մարոկկոյի Տետուան և ՌԴ Չերոկսարի քաղաքների հետ: Կստորագրվի Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև 2018-2020թթ. համագործակցության ծրագիր:	Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել նոր համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ:	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

12.	Փորձի փոխանակում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում	Կիրականացվի փորձի փոխանակում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցության շրջանակներում:	Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալի ՌԴ մայրաքաղաք Մոսկվա կատարելիք այցի հետ կապված: 2018թ. մարտի 3-ից 5-ը Լիոնի քաղաքապետ Ժորժ Կեպենեկյանի Երևան այցի շրջանակներում հանդիպումներ, քննարկումներ են կազմակերպվել Երևան քաղաք տուրիզմի, արտաքին լուսավորության, թանգարանների և այլ ոլորտների պատասխանատուների և ֆրանսիացի համապատասխան գործընկերների հետ: Հարցումներ են ուղարկվել Երևանի քույր և գործընկեր քաղաքներին՝ քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում (համատիրությունների կառավարում, վերելակային տնտեսություն, հրավառություն, աղբահանություն, սանմաքրում, բազմաբնակարան շենքերի անձնագրեր և այլն) փորձի փոխանակման նպատակով:	Հունվար-դեկտեմբեր	
13.	Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների կազմակերպում	Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում կշարունակվի մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագիրը՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:	<ol style="list-style-type: none"> <li>1. N ԵՔ-ՄՔԾՁԲ- 18/ 105</li> <li>2. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 107</li> <li>3. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 104</li> <li>4. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 109</li> <li>5. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 106</li> <li>6. N ԵՔ-ՄԱԾՁԲ- 18/ 110</li> </ol> <p>Նախապատրաստվել և կազմակերպվել է 2018թ.-ի նոյեմբերի 17-ից 20-ը Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի նախագահ Վալերի Պեկրեսի գլխավորած պատվիրակության այցը Երևան: Վալերի Պեկրեսի գլխավորած պատվիրակության կազմում Երևան էին ժամանել Իլ դը Ֆրանսի շրջանի ընտրված պաշտոնյաներ, հայկական համայնքի ասոցիացիաների, տնտեսական ոլորտի ներկայացուցիչներ, ձեռնարկատերեր:</p> <p>Այցի շրջանակներում հանդիպում է տեղի ունեցել Երևանի քաղաքապետի հետ, ստորագրվել է Երևան-Իլ դը Ֆրանս 2018-2021 թթ.-ի համար ճանապարհային քարտեզը:</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ֆ/Ա Արման Ալոն</li> <li>2. «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ</li> <li>3. «Երևան հյուրանոց» ԲԲԸ</li> <li>4. «Արիես Քեյթրինգ Սերվիս»</li> <li>5. «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ</li> <li>6. «Միլենիում Սվիթ» ՍՊԸ</li> </ol>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			Այցի ընթացքում տեղի են ունցել մի շարք այցելություններ, հանդիպումներ ու քննարկումներ հատկապես գյուղատնտեսության, կայուն զարգացման, ձեռնարկատիրության, նորագույն տեխնոլոգիաների ու ստարտափերի ոլորտներում:		
14.	«Էրեբունու արժևորումն ու պահպանումն, արդյունավետությունը և տուրիստական բազմազանության առաջարկը» խորագիրը կրող ծրագրի անցկացում	Երևանի հիմնադրման 2800-ամյակի առթիվ AIMF-ի աջակցությամբ կիրականացվի «Էրեբունու արժևորումն ու պահպանումն, արդյունավետությունը և տուրիստական բազմազանության առաջարկը» խորագիրը կրող ծրագրի անցկացումը	Էրեբունի հնավայրի պահպանման, զբոսաշրջության հիմնման և տուրիստական ծառայությունների ընդլայնման համար Երևանի քաղաքապետարանի, Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի և «Հողաշեն կառույցների ոլորտում մասնագիտացող միջազգային կենտրոն» ասոցիացիայի /CRATerre/ միջև ստորագրվել է «աշխատանքների իրականացման ֆինանսական և տեխնիկական աջակցության» համաձայնագիր:	Հունվար-դեկտեմբեր	
15.	Ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին	Կցուցաբերվի ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև կապահովվի հնարավոր ներգրավում Եվրամիության ֆինանսավորվող ծրագրերին:	Աշխատանքներ են իրականացվել «Եվրոսիթիս» ասոցիացիայի հետ: Աշխատանքներ են իրականացվում ասոցիացիայի հիմնական միջոցառումներին մասնակցելու, ինչպես նաև ԵՄ ծրագրերում ընդգրկվելու կապակցությամբ: 2018թ. մայիսին Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը մասնակցել է Աթենքում կայացած «Համագործակցության հարթակ» միջոցառմանը:	Հունվար-դեկտեմբեր	
16.	Համագործակցություն «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ	Կակտիվացվի համագործակցությունը «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ:	Ընթացիկ աշխատանքներ են իրականացվել «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ:	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

17.	Համատեղ ծրագրերի իրականացում Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ	Կիրականացվեն համատեղ ծրագրեր Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ:	Աշխատանքներ են իրականացվել Ամմանի քաղաքապետարանի հետ: Քննարկումներ են ընթացել հնարավոր ծրագրերի և հետագա համագործակցության իրականացման առնչությամբ:	Հունվար-դեկտեմբեր	
18.	Փոխայցելություններ փորձի փոխանակման նպատակով Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների միջև	Կկազմակերպվեն փոխայցելություններ փորձի փոխանակման նպատակով Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների միջև:	Հարցումներ են ուղարկվել Երևանի քույր և գործընկեր քաղաքներին՝ քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում (համատիրությունների կառավարում, վերելակային տնտեսություն, հրավառություն, աղբահանություն, սանմաքրում, բազմաբնակարան շենքերի անձնագրեր և այլն) փորձի փոխանակման նպատակով: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալի ՌԴ մայրաքաղաք Մոսկվա կատարելիք այցի հետ կապված: 2018թ. մարտի 3-ից 5-ը Լիոնի քաղաքապետ Ժորժ Կեպենեկյանի Երևան այցի շրջանակներում հանդիպումներ, քննարկումներ են կազմակերպվել Երևան քաղաք տուրիզմի, արտաքին լուսավորության, թանգարանների և այլ ոլորտների պատասխանատուների և ֆրանսիացի համապատասխան գործընկերների հետ:	մարտի 13-ից 17-ը	
19.	Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև ծրագրերի իրականացում	Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2015-2020թթ. համագործակցության ծրագրի շրջանակներում կանցկացվեն մի շարք միջոցառումներ, մասնավորապես Երևանի օրերը Ստեփանակերտում, մշակութային տարբեր միջոցառումներ, մասնագետների փոխայցելություններ:	Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից իրականացվել է 33 այց ԱՀ և ԱՀ-ից 30 այց Երևան: Իրականացվել են մեծածավալ տեխնիկական աջակցության ծրագրեր և տրվել են բազմաթիվ նվերներ: Մեծ ուշադրություն է դարձվել սոցիալական բաղադրիչին: Այցերի ընթացքում կազմակերպվել են համերգային միջոցառումներ, փորձի փոխանակման, կրթական, մշակութային և այլ ծրագրեր, այցելություններ գորամասեր: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել կապված ապրիլին Երևանաբնակ զինծառայողների ծնողների	1-ին եռամսյակ	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			այցի հետ:		
20.	Աջակցություն Երևանում կայանալիք Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի կազմակերպչական աշխատանքներին	Աջակցություն կցուցաբերվի 2018 թվականի հոկտեմբերին Երևանում կայանալիք Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովի կազմակերպչական աշխատանքներին:	Նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ են իրականացվել՝ կապված Երևանում կայացած գագաթնաժողովի անկացման հետ կապված:	Հունվար-հոկտեմբեր	
<b>Զբոսաշրջություն</b>					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	Մարքեթինգային քաղաքականության իրականացում	Երևանի ճանաչելիության բարձրացման նպատակով կիրականացվի մարքեթինգային քաղաքականություն Երևանի 2800-ամյակին ընդառաջ՝ Նախատեսվում է միջազգային հարթակներում մայրաքաղաքի հանրահռչակման նպատակով Երևանի մասին տարաբնույթ տպագիր նյութերի պատրաստում և տարածում, հոլովակների պատրաստում, միջազգային էքսպոնների մասնակցություն: Շարունակվելու է իրականացվել նաև համագործակցություն հյուրանոցային տնտեսության օբյեկտների, զբոսաշրջային կազմակերպությունների, օդանավակայանի, Երևանի	Զբոսաշրջային սեզոնին ընդառաջ մայրաքաղաքի մուտքերի հանդիսացող ճանապարհներին տեղադրվել են թեմատիկ վահանակներ՝ «Բարի գալուստ Երևան» բովանդակությամբ՝ անգլերեն և պարսկերեն լեզուներով:  Երևանը՝ որպես հյուրընկալ քաղաք դիրքավորելու նպատակով «Զվարթնոց» օդանավակայանում Կանանց միջազգային օրվա և Մայրության և գեղեցկության օրվա առթիվ կազմակերպվել է Երևան ժամանող կանանց և աղջիկներին ժամանման սրահում ծաղիկներ ու շնորհավորական բացիկներ բաժանելու ակցիա:  «Համով-հոտով Երևան» 4-րդ, «Երևան SUF.U Ֆեստ» 4-րդ և «Երևանի գարեջրի» 5-րդ հոբելյանական փառատոները լուսաբանվել են սոցիալական ցանցերում, հեռուստատեսությամբ, հրապարակվել են հոդվածներ, ինչի արդյունքում փառատոները ստացել են մեծ արձագանք:	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>մետրոպոլիտենի հետ տրամադրելով տեղեկատվություն մայրաքաղաքում իրականացվող միջոցառումների վերաբերյալ:</p>	<p>Պատրաստվել են նաև Երևանի փառատոները ներկայացնող տեսանյութեր, որոնք ներկայացվել են քաղաքի էլեկտրոնային գովազդային էկրաններով:</p> <p>Տրվել են հարցազրույցներ Հանրային Հեռուստատեսությանը, Հանրային ռադիոյին, «Արմնյուզ» հեռուստաընկերությանը, «Մպուտնիկ» և «Արմենպրես» լրատվական գործակալություններին:</p> <p>Երևանում զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության իրականացման նպատակով «Արմենիա Տուրիստական», «Տուրինֆո», «8Days», «Արմենիա» ամիսընկերության և այլ ամսագրերի համար պատրաստվել, ներկայացվել են հոդվածներ, «Երևանյան ամառ 2018» և «Ամանորը Երևանում 2018» միջոցառումների ծրագրի ցանկը /հայերեն, անգլերեն, ռուսերեն/:</p> <p>Զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության իրականացման և զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցման նպատակով իրականացվել է 11 տեսակի տեղեկատվական թուղթիկների դիզայնի և տպագրման աշխատանքներ:</p>		
2.	<p>Երևանը, որպես գրավիչ զբոսաշրջային քաղաք դիրքավորելու և միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով, Երևանում կիրականացվեն մի շարք միջոցառումներ: Երևան քաղաքի զբոսաշրջային դիրքավորման ամրապնդմանն ուղղված քայլերից կարևորվում է հատկապես «Էրեբունի-Երևան» միջոցառումների ծրագրի իրականացումը: Նախատեսվում է նաև զարգացնել «Երևանյան ամառ» եռամսյա միջոցառումների ծրագիրը, որի</p>	<p>Երևանը, որպես գրավիչ զբոսաշրջային քաղաք դիրքավորելու և միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով, Երևանում կիրականացվեն մի շարք միջոցառումներ: Երևան քաղաքի զբոսաշրջային դիրքավորման ամրապնդմանն ուղղված քայլերից կարևորվում է հատկապես «Էրեբունի-Երևան» միջոցառումների ծրագրի իրականացումը: Նախատեսվում է նաև զարգացնել «Երևանյան ամառ» եռամսյա միջոցառումների ծրագիրը, որի</p>	<p>Ցուցաբերվել է աջակցություն Սարյան փողոցում անցկացվող «Երևանի գինու օրեր» միջոցառման իրականացմանը:</p> <p>Հուշարձանների պահպանության միջազգային օրվան ընդառաջ իրականացվել է Երևան քաղաքում հուշարձանների գույքագրման, հուշարձանների վերաբերյալ QR կոդերով տեղեկատվական ցուցանակների տեղադրման և տեղեկատվության թարմացման աշխատանքներ:</p> <p>Երևանում միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով «Երևանյան ամառ 2018» ծրագրի շրջանակում Հանրապետության Հրապարակի մետրոյի կայարանի հարևանությամբ գտնվող «Խաչքարերի պուրակ»-ում կազմակերպվել է «Համով-հոտով Երևան» փառատոնը «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և</p>	<p>Աշխատակազմի տուրիզմի բաժին Հունվար-դեկտեմբեր</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>շրջանակում արդեն ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան» տոնաձիսական փառատոնը, Երևանի գարեջրի փառատոնը, Երևան Տարածաշրջանի մշակութային, գործարարության ցուցահանդեսները, թեմատիկ տոնավաճառները և այլն: Երևանի հիմնադրման 2800-ամյակին ընդառաջ մայրաքաղաքում կկազմակերպվի «Երևանը հրավիրում է» ցուցահանդեսը:</p> <p>կապահայանման» ՀԿ-ի հետ համատեղ /շուրջ 5000 այցելու/:</p> <p>Մայրաքաղաքում միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով Հյուսիսային պողոտայում կազմակերպվել է «Երևան SUՄԱՋՖեստ» 4-րդ փառատոնը, որին այս տարի առաջին անգամ առանձին տաղավարով հանդես է եկել Իսպանիայից ժամանած Վիլենայի քաղաքապետարանի տուրիզմի բաժնի ղեկավար Մերսեդես Մենոր Սեզալեդերը: Իրենց ազգային տարազներն ու մշակույթն են ներկայացրել մի շարք դեսպանություններ, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կազմակերպություններ: Փառատոնը ունեցել է մեծ արձագանք /շուրջ 7000 այցելու/:</p> <p>Երևանում միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով «Երևանյան ամառ 2018» ծրագրի շրջանակում Կարապի լճի հարակից տարածքում կազմակերպվել է Երևանի գարեջրի 5-րդ հորեյանական փառատոնը, որն ուղեկցվել է երաժշտական կատարումներով, փառատոնը ստացել է մեծ արձագանք /շուրջ 7000 այցելու/:</p> <p>Ցուցաբերվել է աջակցություն «Կանաչ արահետ» ՀԿ-ին՝ Կիրովի անվան Մանկական այգում «Գյուղական կյանքի և ավանդույթների» ամենամյա 5-րդ փառատոնի իրականացման նպատակով:</p> <p>Համակարգվել է «Ֆրանկաֆոնիայի ավանի» Երևան քաղաքի տաղավարի 7-օրյա կազմակերպչական և հյուրընկալության աշխատանքները:</p> <p>Համակարգվել է «Էրեբունի-Երևան 2800» հորեյանական մի շարք տոնական միջոցառումներ և կամավորական խմբերի աշխատանքներ, ինչպես նաև տեղեկատվության տարածման և իրակազեկմանն ուղղված աշխատանքները:</p> <p>Կազմակերպվել է ամանորյա անվճար թեմատիկ էքսկուրսիաների շարքը (դեկտեմբերի 24, 26, 29): Զբոսաշրջիկները հնարավորություն են ունեցել բացահայտել</p>		
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>Տեղեկատվական աջակցություն զբոսաշրջիկներին</p>	<p>Նախատեսվում է Երևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում, ինչպես հայերեն, այնպես էլ բոլոր այն լեզուներով, որոնք օգտակար կլինեն թիրախային լսարանի համար: Զբոսաշրջիկների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կգործի բազմալեզու կայք, որտեղ այցելուները կարող են գտնել հավաստի տեղեկատվություն մայրաքաղաքի պատմության, գործող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ: Նախատեսվում է նաև շահագործել զբոսաշրջային միասնական տեղեկատվական կենտրոնը, որը զբոսաշրջիկներին կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն ճանապարհորդության տարբեր հարցերի, երթուղու, զբոսաշրջավայրերի վերաբերյալ և այլն:</p>	<p>տոնական Երևանի կարևոր նշանակություն ունեցող վայրերը: Մարտի վերջին տասնօրյակում մայրաքաղաքի մարդաշատ վայրերում զբոսաշրջիկներին բաժանվել են բազմալեզու քարտեզներ և տեղեկատվական ուղեցույցեր: Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացման շրջանակում իրականացվել է «Ես եմ իմ քաղաքի զբոսավարը» ծրագիրը: Զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցման նպատակով իրականացվել են Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի «Զբոսաշրջություն» և «Միջոցառումների օրացույց» բաժինների համալրման, տվյալների թարմացման աշխատանքներ: Երևանը որպես զբոսաշրջային քաղաք դիրքավորելու ծրագրերի շրջանակում՝ սոցիալական ցանցերում (instagram, facebook) պարբերաբար հրապարակվել է մայրաքաղաքում զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող ծրագրերը: Էլեկտրոնային փոստով, իսկ հունիսի 16-ից արդեն Երևանում գործող տեղեկատվության աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնների օգնությամբ տրվել է աջակցություն Երևան այցելող զբոսաշրջիկներին, ինչպես նաև համաքաղաքացիներին մայրաքաղաքի զբոսաշրջային տարբեր ծառայությունների և զբոսաշրջային արդյունքների մասին: 2018 թվականի ընթացքում տեղեկատվական աջակցություն է ցուցաբերվել շուրջ 25000 անձի: Երևան այցելող զբոսաշրջիկների համար հարմարավետ</p>	<p>Աշխատակազմի տուրիզմի բաժին</p> <p>Հունվար-դեկտեմբեր</p>	
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>պայմանների ստեղծման, Երևանի մասին տեղեկատվությունը մատչելի դարձնելու նպատակով իրականացվել է «Երևանյան ամառ 2018», «Էրեբունի-Երևան 2800», «Նոր Տարին Երևանում 2019» միջոցառումների ծրագրի բուկլետների, զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող միջառնակ այլ տեղեկատվական բրոշուրների, նյութերի թարգմանություն (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), բուկլետների և թռուցիկների տարածման ուղղությամբ աշխատանքներ:</p> <p>Համագործակցելով Երևանի հյուրանոցների, տուրիստական ընկերությունների, ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենի և «Զվարթնոց» օդանավակայանի տեղեկատվական կենտրոնի հետ՝ տրամադրվել է տեղեկատվություն տարվա ընթացքում մայրաքաղաքում իրականացվող միջոցառումների, /մասնավորապես՝ «Երևանյան ամառ 2018», «Էրեբունի-Երևան 2800» և «Նոր Տարին Երևանում 2019» ծրագրեր/, մշակութային և եկեղեցական տոների, ինչպես նաև այլ միջոցառումների վերաբերյալ:</p>		
4.	Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացում	Կիրականացվեն ծրագրեր ուղղված Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը: Այդ նպատակով նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի ենթակա թանգարանների մասնակցությամբ միջոցառումների իրականացում, «Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու շարունակական կատարելագործում ու արդիականացում, լեզուների ավելացում, Երևան քաղաքում տեղադրված ցուցանակների	<p>12.12.2017թ. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/1</p> <p>30.03.2018թ. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/113</p> <p>30.03.2018թ. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/164</p> <p>Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացման շրջանակում հունվար-ապրիլ ամիսներին կատարվել է Երևանի քաղաքի կենտրոնական ուսումնասիրություն Երևան քաղաքի կենտրոնական հատվածներում զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնների ստեղծման աշխատանքների ուղղությամբ իրականացվել է երկու տեղեկատվական կետի բացման և շահագործման աշխատանքները: Կրպակները տեղադրվել են</p>	<p>Աշխատակազմի տուրիզմի բաժին</p> <p>«Նիկոլ Դուման» ԱԿ 01.05.2018թ.</p> <p>«Երպետ» ՍՊԸ և «Ատլանտ» ՍՊԸ (Կոնսորցիում) 30.04.2018թ.</p> <p>և «Կան Դեկոր» ՍՊԸ 10.05.2018թ.</p> <p>Հունվար-դեկտեմբեր</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>գույքագրում և անհրաժեշտության դեպքում՝ արդիականացում՝ համագործակցելով ՀՀ ոստիկանության հետ:</p>	<p>Հանրապետության հրապարակի մետրոյի կայարանի՝ Նալբանդյան փողոցին հարող պուրակի մոտ և Ֆրանսիայի հրապարակի հարակից տարածքում:</p> <p>Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացման շրջանակում կազմակերպվել է «Երևան Սիթի Տուր» Էսթեյտիկ ծրագրի, ավտոբուսների և երթուղու տեղեկատվական և գովազդային նյութերի վերաբերենդավորման աշխատանքները: Վերջինիս շրջանակում իրականացվել են սոցիալական ավելի քան 20 ծրագրեր: 2018թ. մարտ-հոկտեմբեր ամիսների ընթացքում ծրագրից օգտվել է շուրջ 6500 այցելու, որից 3500-ը՝ զբոսաշրջիկ: Երթուղուց օգտված օտարերկրացիների գերակշիռ մասը եղել են ՌԴ-ից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Չինաստանից, Իսպանիայից, ԱՄՆ-ից, Իրանից և Ֆիլիպիններից ժամանած զբոսաշրջիկները:</p> <p>Տարին երկու անգամ իրականացվել է Երևանի հյուրանոցային տնտեսության օբյեկտների գույքագրման աշխատանքներ: Գույքագրման արդյունքներում 2018թ. դրությամբ մայրաքաղաքում գործքում է ավելի քան 250 ՀՏՕ, 5586 համարային ֆոնդով և 9985 ննջատեղով:</p>		
5.	<p>Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում</p>	<p>Նախատեսվում է իրականացնել զբոսաշրջության ոլորտում միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացմանն ուղղված աշխատանքներ: Կիրականացվեն տարաբնույթ միջոցառումներ քույր և գործընկեր քաղաքների հետ: Կկազմակերպվեն գործարար հանդիպումներ:</p>	<p>Նախապատրաստվել է Երևան քաղաքի՝ ՄԱԿ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությանն անդամակցության հայտը:</p> <p>Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացման նպատակով մայրաքաղաքում անցկացվող «Սանկտ Պետերբուրգի օրերը Երևանում» ծրագրի շրջանակում կազմակերպվել է Երևան-Սանկտ Պետերբուրգ, Քաղաքային զբոսաշրջության զարգացման հեռանկարները»</p>	<p>Աշխատակազմի տուրիզմի բաժին</p> <p>Հունվար-դեկտեմբեր</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>ճանաչողական այցեր, փորձի փոխանակում, սեմինարներ, կոնֆերանսներ, կլոր-սեղաններ, պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:</p>	<p>խորագրով կլոր սեղան-քննարկման աշխատանքները հանդիպման ընթացքում ներկայացնելով «Երևան 2800» հորեյանական միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչներառող ծրագրերը, քննարկվել Երևանի և Մանկտ Պետերբուրգի զբոսաշրջային ներուժի ընդլայնման, սոցիալական գովազդների փոխանակման և այլ համատեղ ծրագրերի մշակման հնարավորությունները:</p> <p>Կազմակերպվել է «Այցելի՛ր Երևան-2800» խորագիրը կրող ցուցահանդես ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Գլենդելի կենտրոնական գրադարանի և արվեստի կենտրոնում:</p> <p>Անցկացվել է Երևանի հիմնադրման 2800-ամյակի առթիվ «Այցելի՛ր Երևան-2800» խորագիրը կրող լուսանկարների ցուցահանդես Ֆինլանդիայում և Թաիլանդի թագավորությունում:</p>		
--	--	--	--	--	--

Աջափնյակ վարչական շրջան					
Հ/հ	Ծրագրի, միջոցառումների և աշխատանքների անվանումը	Նախատեսված աշխատանքներ	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	<b>Տարածքային բարեկարգման աշխատանքներ</b>				
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	Նախատեսվում է կառուցել 15.400 քմ մակերեսով ճանապարհային նոր ցանց: Կիրականացվեն ասֆալտ-բետոնե ծածկույթի հիմնանորոգման եւ վերանորոգման աշխատանքներ՝ ներառելով նաեւ նախադպրոցական հաստատությունների բակերը:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/61-1</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել է 5000քմ ասֆալտ-բետոնե ծածկույթի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում Հակոբյանց փող. վերջնամաս, Շինարարների 292, 162, 52, 82, 15/12, 10/12, 132, 72ենքերի բակեր, Նազարբեկյան /Գ-3թաղ./	«Էլիտ Սթար» ՍՊԸ 11.04.2018թ.-01.10.2018թ.	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>Հյուրանոցի հարևանությամբ ճանապարհահատված, 16թաղ. հ 432 դիմաց, Հալաբյան 9/1շ, 7շ, Նորաշեն 188 և 185 դպրոց տանող ճանապարհ, Արզումանյան 10շ, 12շ, 13շ, 15շ, 7շ, բակեր, Էստոնական 7շ. 9շ. 11շ. բակեր, Միսակյան 22շ., բակ, Մարգարյան 20/1շ. բակ:</p> <p>15.400քմ ճանապարհային նոր ցանցի կառուցման աշխատանքերը ներառված են Բարաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի կառուցման ծրագրում: Տե՛ս Քաղաքաշինության և ճարտարապետության բաժին:</p>		
1.2	Բակային տարածքների բարեկարգում	2018 թվականին կատեղծվեն 6 նոր բակային տարածքներ:	<p><b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/48-1</b>                  Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:                  Իրականացվել է թվով 7 բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Հալաբյան 24. 26շ. /աստիճանների կառուցում/, Հալաբյան 9/1շ. բակ, Մազմանյան 5շ. բակ, Մարգարյան 2նրբ. 7/1շ. բակ, Նազարբեկյան /Գ-3թաղ./ 44շ. բակ, Բաշինջաղյան 194.196շ բակ, Բաշինջաղյան 169շ. 171շ.բակ:</p> <p><b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/48-2</b>                  Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:                  Իրականացվել է թվով 1 բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ Լենինգրադյան 48/4շ. հասցեում:</p>	<p>«Սմալա» ՍՊԸ                  05.04.2018թ.-31.07. 2018թ.</p> <p>«Յանգ Ինվեստ» ՍՊԸ                  05.05.2018թ.-31.07.2018թ.</p>	
<b>2</b>	<b>Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում</b>				
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	Վարչական շրջանում նախատեսվում էչոր և առավել վտանգավոր ծառերի հատում, սիզամարգերի մակերեսների ավելացում՝ հասցնելով 31,5հա:	<p>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/6-12                  Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:                  Իրականացվել է 253.62հա կանաչ տարածքների պահպանման և խնամքի աշխատանքներ:                  Վերանորոգվել է 714զմ ոռոգման ցանց:</p>	<p>«Աջափնյակ կանաչապատում» ՓԲԸ                  24.01.2018թ.-31.12.2018թ.</p>	
2.2	Ծաղկային տարածքների		Իրականացվել է 2017թ. աշնանը օնկված կակաչների մաքրման, հարստացման և փխրեցման աշխատանքներ: Իրականացվել է	<p>«Աջափնյակ կանաչապատում» ՓԲԸ</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	ստեղծում և խնամք		թվով 150590 ծաղկասածիլների տեղադրման աշխատանքներ:	24.01.2018թ.-31.12.2018թ.	
2.3	Ծառատունկ		Տնկվել են թվով 478 ծառ և թուփ:	«Աջափնյակ կանաչապատում» ՓԲԸ 24.01.2018թ.-31.12.2018թ.	
2.4	Չոր ծառերի հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		Իրականացվել է թվով 786 ծառերի երիտասարդացման աշխատանքներ և թվով 5 չոր ծառերի հատում:	Աջափնյակ կանաչապատում» ՓԲԸ 24.01.2018թ.-31.12.2018թ.	
<b>3 Բնակարանային ֆոնդի շահագործում</b>					
3.1	Հարթ տանիքների նորոգում /իզոգամ/	Նախատեսվում է իրականացնել 5000 քմ հարթ և 1350 քմ թեք տանիքների, թվով 24 վերելակների վերանորոգման աշխատանքներ: 2018թ. կավարտվեն Շինարարների փող . հ . 14/1 բազմաբնակարան բնակելի շենքի շինարարական աշխատանքները:	<b>ԵՔ-ԲԸԱՇՁԲ-18/41-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել է 6272.5քմ. հարթ տանիքի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Հալաբյան 24շ, Բաշինջաղյան 188շ, Մարգարյան 2նրբ. 10շ, 14շ, 12Աշ, 12շ, Սիսակյան 18Աշ, Շիրազի 26շ, Նորաշեն 37շ, Լենինգրադյան 52շ, 16թաղ. 23շ, 25շ, 26շ, 31շ, 33շ, 16թաղ. 30շ, 16շ, 17շ, 21շ, 47շ, 15շ. 14շ. 20շ. 44շ. 46շ. Ֆուչիկի 7/5շ. 19շ. Սիսակյան 18Բշ, Շինարարների 15/2շ. 10/1շ. Բաշինջաղյան 2նրբ. 1շ., 196շ. Արզումանյան 32շ. 24շ. Մազմանյան 5շ. Աբելյան 17շ. Շիրազի 40շ. Հալաբյան 9/1շ.: 16թաղ. 34շ, 29շ, 28շ, 18շ, 21շ: Աբելյան 17շ, Բաշինջաղյան 169շ, Հալաբյան 34Աշ, 38շ, Մազմանյան 5/1շ, Գ-3թաղ. 22շ: 2018թ. Շինարարների փող . հ . 14/1 բազմաբնակարան բնակելի շենքի շինարարական աշխատանքներն ավարտվել են:	«Սասունասար» ՍՊԸ 15.03.2018թ.-30.08.2018թ.	
3.2	Թեք տանիքների նորոգում /ազդեցիկերձաք		<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/23</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել է Հալաբյան 30շենքի 730քմ մակերեսով թեք	«Կարայ-Գագ-Ռադ» ՍՊԸ 14.02.2018թ.-30.09.2018թ	Բյուջեի քիչ գումարով հաստատման պատճառով,

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	ար/		<p>տանիքի հիմնանորոգման աշխատանքներ:  <b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/56-1</b>          Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:          Ձեռք է բերվել թվով 3000 հատ ազդաներձաքար:          Համատիրությունների կողմից իրականացվել են տեղադրման աշխատանքներ:</p>	<p>«Կավաշեն» ՍՊԸ          13.02.2018թ.-31.07.2018թ.</p>	<p>իրականացվել է 730քմ.          մակերեսով տանիքի հիմնանորոգում:</p>
3.3	Վերելակների հիմնանորոգում		<p><b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/70</b>          Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:          Իրականացվել է թվով 47 վերելակների վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝          Շիրազի 142 3-րդ մուտք, Շինարարների 10/1շ. 1-ին մուտք, Բաշինջաղյան 2նրբ. 1շ. 192շ, Արզումանյան 30շ. 16/2շ, 34շ. 16թաղ. 17շ, 14շ, 20շ, 21շ, 39շ, 40շ, 15շ, 27շ, 36շ, 38շ, 47շ, Մարգարյան 29/1շ, Սիսակյան 18Աշ: Շիրազի 52շ, 18շ, 40շ, 34շ, Բաշինջաղյան 189շ, 163շ. 2-րդ մուտք, Արզումանյան 16/1շ, 16թաղ. 30շ, 46շ, 17շ, 21շ, 34շ, 45շ, Հալաբյան 22Աշ, 22Բշ, 24շ, 26շ: Շիրազի 30շ, 32շ. 3-րդ մուտք, 16թաղ. 15շ, 16շ, Լենինգրադյան 52շ. 1-ին մուտք, 10/1շ., 15/1շ 1-ին մուտք, 2-րդ մուտք, 15/2շ 2-րդ մուտք, Մազմանյան 4շ.:</p>	<p>«Աջափնյակ վերելակ» ՓԲԸ          19.01.2018թ.-25.12.2018թ</p>	
3.4	Մուտքերի վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի թվով 155 մուտքերի վերանորոգման աշխատանքներ:	<p><b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/40-2</b>          Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:          Իրականացվել է թվով 79 մուտքերի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝          Շինարարների 28շ. 1-ին մուտք, Շինարարների 24շ. 2-րդ մուտք, Հալաբյան 57շ. 1-ին մուտք, Հալաբյան 59շ. 2-րդ մուտք, Հալաբյան 53շ. 3-րդ մուտք, Շիրազի 44շ 1,2,3-րդ մուտքեր, Աբելյան 5շ, 1,2,3-րդ մուտքեր          Բաշինջաղյան 179շ. 1.2.3.4.5.-րդ մուտքեր, Շինարարների 27շ. 1-ին մուտք Շինարարների 8շ. 1-ին և 3-րդ մուտքեր, Շինարարների 3շ. 3-րդ մուտք, Շինարարների 4շ. 5-րդ մուտք,</p>	<p>«Արհովշին»ՍՊԸ          15.03.2018թ.-30.09.2018թ          Համատիրություններ՝ «Աջափնյակ 1», «Մաքուր բակ», «Երֆի», «Ֆիզիկոս», «Մեծ Հայք», «Բաշինջաղյան 198», «Օադկունք», «Զորավիզ», «Լենինգրադյան 48/3», «Մարիամ», «Մարգարյան 25», «Մանուշակ», «Շեն-99», «Աջափնյակ -5», «Արմինե»:</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>Շինարարների 132. 1-ին մուտք, Շինարարների 142. 3-րդ մուտք, Շինարարների 182. 3-րդ մուտք, Շինարարների 72. 1-ին մուտք, Շինարարների 252. 2-րդ մուտք, Շինարարների 362. 6-րդ մուտք, Աբելյան 92 4-րդ մուտք, Հալաբյան 302. 1-ին և 2-րդ մուտքեր, Հալաբյան 532. 2-րդ և 3-րդ մուտքեր, Բաշինջաղյան 1802. 2-րդ և 3-րդ մուտքեր, Բաշինջաղյան 1942. 2-րդ և 4-րդ մուտքեր, Բաշինջաղյան 1872. 1,2,3,4,5-րդ մուտքեր, Բաշինջաղյան 1փ 202. 3-րդ մուտք, Լենինգրադյան 362. 1-ին մուտք, Լենինգրադյան 402. 1-ին և 2-րդ մուտքեր, Լենինգրադյան 502. 9-րդ մուտք, Լենինգրադյան 48/12. 1-ին մուտք, Լենինգրադյան 48/52. 1-ին մուտք, Մարգարյան 412. 1-ին մուտք                  Մարգարյան 432. 3-րդ և 6-րդ մուտքեր, Մարգարյան 2նրբ. 52. 4-րդ մուտք                  Մարգարյան 2նրբ. 72. 3-րդ և 4-րդ մուտքեր, Էստոնական 112 2-րդ մուտք, Էստոնական 132 2-րդ մուտք, Հասրաթյան 102 1-ին մուտք, Սիսակյան 82 2-րդ մուտք, Էստոնական 142 1-ին մուտք, Հալաբյան 112 5-րդ մուտք, Հալաբյան 52 5-րդ մուտք, Հալաբյան 92 4-րդ մուտք, Հալաբյան 302 3-րդ մուտք, Հալաբյան 342 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մուտքեր, Լենինգրադյան 42 5-րդ մուտք, Լենինգրադյան 322 2-րդ և 3-րդ մուտքեր, Լենինգրադյան 48/42 3-րդ և 4-րդ մուտքեր, Բաշինջաղյան 1832 4-րդ և 5-րդ մուտքեր, Հասրաթյան 102 2-րդ մուտք, Հասրաթյան 62 1-ին և 2-րդ մուտքեր:                  Բ/բ շենքերի կառավարման մարմինների կողմից իրականացվել են թվով 82 մուտքերի վերանորոգման աշխատանքներ:</p>		
<b>4</b>	<b>Կրթություն, մշակույթ և սպորտ</b>				
4.1	Կրթություն	Աջափնյակ վարչական շրջանում նախատեսվում է վերանորոգել հ . 36 մանկապարտեզը, մասնակի վերանորոգել հհ . 35, 37, 46, 47, 48 մանկապարտեզները:	Հհ. 35, 37, 46 մանկապարտեզների մասնակի վերանորոգման և հ. 44 մանկապարտեզի և թիվ 22 հանրակրթական դպրոցի ջեռուցման համակարգի ինչպես նաև հ . 46 մանկապարտեզի և թիվ 156 հանրակրթական դպրոցի ջեռուցման համակարգի առանձնացման աշխատանքները չեն իրականացվել:		36.47.48.49 մանկապարտեզները ներառվել են «Երևանի էներգաարդյունավ

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>Իրականացվելու է հ . 44 մանկապարտեզի և թիվ 22 հանրակրթական դպրոցի ջեռուցման համակարգի ինչպես նաև հ . 46 մանկապարտեզի և թիվ 156 հանրակրթական դպրոցի ջեռուցման համակարգի առանձնացման աշխատանքներ:</p>			<p>ետության և հանրային շենքերի ջերմային հիմնանորոգում» ծրագրում , իրականացվել են սեյսմիկ հետազոտության աշխատանքներ և էներգետիկ աուդիտ, կատարվում են նախագծման աշխատանքներ:</p> <p>Ծրագրով նախատեսված մյուս աշխատանքները չեն իրականացել, քանի որ տեղի է ունեցել գումարների վերաբաշխում՝ առաջնահերթ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար:</p>
Մշակույթ	2018թ . նախատեսում է կազմակերպել և իրականացնել 20 մշակութային և կրթական միջոցառում:	<p><b>ԵՔ-ԲՄՇՁԲ-18/19-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ միջոցառումները:</p>			

		<p><b>1. ՀՀ բանակի կազմավորման օր:</b> Կազմակերպվել է այցելություն զոհված և հաշմանդամ զինվորներին և վարչական շրջանի տարածքում գտնվող զորամաս:</p> <p><b>2. Կանանց միջազգային օր</b> Վարչական շրջանի կենտրոնական փողոցներում կանանց բաշխվել են ծաղիկներ:</p> <p><b>3. Մայրության և գեղեցկության օր:</b> Կազմակերպվել է, համերգային միջոցառում: Մասնակցել են հրավիրված երգիչ-երգչուհիներ, համույթներ: Կազմակերպվել է հրավառություն:</p> <p><b>4. Հաղթանակի և Շուշիի ազատագրման օր:</b> Կազմակերպվել է վարչական շրջանի վետերանների այցը «Հաղթանակ» զբոսայգի, տոնական միջոցառում և հյուրասիրություն:</p> <p><b>5. Ֆիդայատուն և Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման օր:</b> Կազմակերպվել է համերգային ծրագիր:</p> <p><b>6. «Վերջին զանգ»:</b> Կատարվել է այցելություններ վարչական շրջանի կրթական հաստատություններ:</p> <p><b>7. Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր:</b> Կազմակերպվել է մանկական մասսայական շոու ծրագիր:</p> <p><b>8. «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում իրականացվել է մանկական զվարճալի միջոցառում՝ «Ուրախ ամառ Աջափնյակից» խորագրով:</b></p> <p><b>9. Բակային ճամբարների և ամառային միջոցառումների կազմակերպում:</b> Իրականացվել են մանկական շոու և համերգային ծրագրեր:</p>	<p>1. «Բրյուս» ՄՊԸ 28.01.2018թ.</p> <p>2. «Բրյուս» ՄՊԸ 08.03.2018թ.</p> <p>3. «Բրյուս» ՄՊԸ 07.04.2018թ.</p> <p>4. «Բրյուս» ՄՊԸ 09.05.2018թ.</p> <p>5. «Բրյուս» ՄՊԸ 28.05.2018թ.</p> <p>6. «Բրյուս» ՄՊԸ 25.05.2018թ.</p> <p>7. «Բրյուս» ՄՊԸ 01.06.2018թ.</p> <p>8. «Բրյուս» ՄՊԸ</p>	
--	--	--	--	--

			<p><b>10. Վարդավառի տոն Ջրցան մեքենաներով:</b> Վարդավառի կազմակերպում բակային տարածքներում և «Արմենիա» ԲԿ լողավազանի տարածքում: Դույլերի, բնական հյութի բաշխում մասնակիցներին:</p> <p><b>11. Գիտելիքի օր:</b> Կազմակերպվել է այցելություն վարչական շրջանի կրթօջախներ:</p> <p><b>12. Հայաստանի Անկախության օրվան</b> նվիրված միջոցառում:</p> <p><b>13. Ուսուցչի օր:</b> Կազմակերպվել է վարչական շրջանի ուսուցիչների և դասատուների պարգևատրման ցերեկույթ և հյուրասիրություն:</p> <p><b>14. Գրադարանավարի օր:</b> Կազմակերպվել է վարչական շրջանի գրադարանավարների պարգևատրման ցերեկույթ և հյուրասիրություն:</p> <p><b>15. Ամանոր և Սուրբ ծնունդ:</b> Կազմակերպվել է բակային շրջիկ միջոցառումներ և Մայր միջոցառում, բաշխվել են նվերներ, իրականացվել է հրավառություն: Կազմակերպվել է հյուրասիրություն:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:</p> <p><b>16. Միջմանկապարտեզային սպորտախաղ</b> Իրականացվել է սպորտային մրցումներ վարչական շրջանի մանկապարտեզների ավագ խմբերի միջև; Հանձնվել են նվերներ /սպորտային գույք/:</p> <p><b>17. Տարվա ընթացքում կատարված միջոցառում /բակային</b></p>	<p>08.06.2018թ.</p> <p>9. «Բրյուս» ՍՊԸ Հուլիս-օգոստոս</p> <p>10. «Էլիտա ԷՍՎԵ» ՍՊԸ 08.07.2018թ.</p> <p>11. «Բրյուս» ՍՊԸ 01.09.2018թ.</p> <p>12.«Բրյուս» ՍՊԸ 21.09.2018թ.</p> <p>13.«Բրյուս»ՍՊԸ 05.10.2018թ</p> <p>14. «Բրյուս» ՍՊԸ 08.10.2018թ</p> <p>15. «Բրյուս» ՍՊԸ 27.12-28.12.2018թ</p>	
--	--	--	--	---	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			տարածքների, հուշադրյունների բացում, /  <b>18. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր</b> <b>19. «Էրեբունի-Երևան» տոնակատարության</b> <b>20. Ամանորի 1 ծրագիր</b>	16. «Բրյուս» ՍՊԸ 10-14.05.2018թ.  17. «Բրյուս» ՍՊԸ	Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, «Էրեբունի-Երևան» տոնակատարության և Ամանորի 1 ծրագրի կազմակերպումը բյուջեով չի հաստատվել
4.2	Սպորտ	2018թ. նախատեսում է կազմակերպել և իրականացնել 10 մարզական միջոցառում՝ այդ թվում բակային փառատոններ և ավանդական մրցաշարեր: Նախատեսվում է կառուցել մարզադպրոցի նոր շենք:	<b>ԵՔ-ԲՄԾԾԲ-18/24-1</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ միջոցառումները: <b>1. ՀՀ Անկախության 27-րդ տարեդարձին</b> նվիրված դպրոցականների քաղաքային 27-րդ մարզական խաղեր:  <b>2. Ազգային Ժողովի գավաթի խաղարկություն:</b> ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկությունն անցկացվում է 4 փուլով՝ ներդպրոցական, շրջանային, քաղաքային եզրափակիչ և հանրապետական եզրափակիչ:  <b>3.</b> Հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների «Սպորտլանդիա» մրցույթ:  <b>4.</b> ՀՀ և Արցախի հանրակրթական դպրոցների 8-12 դասարանների աշակերտների սպարտակիադա:  <b>5.</b> Տարեցների հանրապետական խաղերը անցկացվում են 3 փուլով՝ շախմատ, շաշկի, դարթս մարզաձևերից:	1. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Փետրվար-մարտ  2. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Մարտ-ապրիլ  3. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Մայիս-հունիս 4. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Մայիս-հունիս 5. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Հուլիս-օգոստոս 6. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ	

			<p><b>6. «Առողջսերունդ՝ պաշտպանված հայրենիք»</b> համաքաղաքային բակային ավանդական փառատոն: Խաղերն անցկացվում են 2 փուլով, մայիս-հունիս ամիսներին վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, հանդբոլ, հեծանվավազք, շախմատ և շաշկիմարզաձևերից:</p> <p><b>7. ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ:</b> «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթն անցկացվում է օրացուցային տարվա հունիս-հուլիս ամիսներին՝ 3 փուլով, 1-ին և 2-րդ փուլերը՝ նախնական, 3-րդ փուլը՝ եզրափակիչ:</p> <p><b>8.</b> Աջափնյակ վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն:</p> <p><b>9.</b> Կազմակերպվել է նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմամարզական խաղեր, որն անցկացվել է 4 փուլով:</p> <p><b>10.</b> «Աջափնյակ վարչական շրջանի գավաթ» բաց մրցաշար: Մրցույթը անցկացվել է 1 փուլով:</p>	<p>Մայիս-հունիս</p> <p>7. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Հունիս-հուլիս</p> <p>8. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ 01.06-10.06.2018թ.</p> <p>9. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Հոկտեմբեր- նոյեմբեր</p> <p>10. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ Նոյեմբեր</p>	
5	Սոցիալական ապահովություն				

<p>5.1</p>	<p>Աջակցության ծրագրեր</p>	<p>Շարունակական բնույթ կրթի վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին պետպատվերի շրջանակներում բուժսպասարկման ապահովման ծրագիրը: 2018թ. ընթացքում վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների համար կշարունակվի բարեգործական ճաշարանի կազմակերպման ծրագիրը, որը իրականացվում է « Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ: Բարեգործական ճաշարանի շահառուների համար կկազմակերպվեն միջոցառումներ՝ «Ամանորի», «Սուրբ Ծնունդի», «Սուրբ Հարության», «Խաղողօրհներբի» եւ «Տարեցների օրվա» կապակցությամբ: Սոցիալական տարբեր խմբերի համար տոն եւ հիշատակի օրերին «Սուրբ Հարության», «Ընտանիքի միջազգային օրվա», «Երեխաների պաշտպանության օրվա», «Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա», «Գիտելիքի օրվա» կապակցությամբ</p>	<p>Հաշվետու ժամանակատահովածում սոցիալապես անապահով 166 ընտանիք ստացել է դրամական օգնություն, 50 բնակիչ ստացել է միջնորդագիր՝ պետպատվերի շրջանակներում բուժվելու համար:</p> <p><b>ԵՀ-ԳՀՇՁԲ-18/5-1</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:</p> <p>1. Ապրիլի 4-ի Սուրբ Հարության տոնի առթիվ վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանում շահառուների և սոցիալապես անապահով բնակիչների համար կազմակերպվել է միջոցառում՝ տոնական ճաշկերույթի տեսքով /112 շահառու/:</p> <p>2. Մայիսի 18-ին՝ Ընտանիքի Միջազգային օրվա առթիվ այցելություն է կազմակերպվել վարչական շրջանում բնակվող սոցիալապես անապահով բազմազավակ 5 ընտանիքների, որոնց տրամադրվել է կենցաղային տեխնիկա:</p> <p>3. Հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ «Արևամանուկ» ԲՀԿ-ի տարածքում կազմակերպվել է միջոցառում կազմակերպության շահառուների մասնակցությամբ: Միջոցառման ընթացքում եղել է հյուրասիրություն:</p> <p><b>ԵԲ-ԳՀԱՊՁԲ-18/64</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Օգոստոս ամսին «Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագրի շրջանակներում դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ է ստացել սոցիալապես անապահով ընտանիքների 300 դպրոցակ երեխա:</p>	<p>«Էլիտ Էսվե» ՍՊԸ 21.03.2018թ.</p> <p>«Արմբումփվիներ» ՍՊԸ 22.03.2018թ.</p>	
------------	----------------------------	---	--	---	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>կկազմակերպվեն միջոցառումներ: Դրամական, պարենային աջակցություն կցուցաբերվի սոցիալապես անապահով եւ բազմազավակ ընտանիքներին: Մանուկ փաթեթներ կհատկացվեն առավել կարիքավոր ընտանիքներին: Նպաստառու, բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ երեխաներին կտրամադրվի դպրոցական պայուսակ գրենական պիտույքների փաթեթներով: Աջակցություն կցուցաբերվի նաև վարչական շրջանում վարձակալական հիմունքներով բնակվող սիրիահայ ընտանիքներին:</p>	<p><b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/211</b>          Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Վարչական շրջանի սոցիալապես անապահով 2230 բնակչի տրամադրվել է ամանորյա սննդի փաթեթ:           Նախատեսված Խաղողօրհների տոնին նվիրված, Էքսկուրսիա սոցիալապես անապահով ընտանիքների համար Հայաստանի տեսարժան վայրերով, Տարեցների տոնին նվիրված, Հաշմանդամների օրվան նվիրված միջոցառումները չեն իրականացվել:</p>	<p>«Դեագա» ՍՊԸ          07.12.2018թ</p>	<p>Միջոցառումները չեն իրականացվել «Երևան» հիմնադրամի լուծարման պատճառով</p>
5.2	Համագործակցություն	<p>Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով կշարունակվի սոցիալապես անապահով ընտանիքներին օժանդակության ցուցաբերման գործընթացը:</p>	<p>Վարչական շրջանում գործող «Առաքելություն Հայաստանի» ԲՀԿ-ի բարեգործական ճաշարանի շահագործման, բնականոն գործունեություն ապահովման և կոմունալ վճարումների համար տրամադրվել է ֆինանսական աջակցություն:          Համագործակցելով «Արևամանուկ» ԲՀԿ-ի «Լուսինե» կանանց ՀԿ-ի հետ՝ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է օգնություն:</p>		

Ավան վարչական շրջան					
Հ/հ	Ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	<b>Տարածքային բարեկարգման աշխատանքներ</b>				
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	Կիրականացվեն մայթերի և փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	<b>N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/61-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել է 10.000 քմ ընդհանուր մակերեսով մայթերի և փողոցների ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ՝ հետևյալ հասցեներում՝ Դուրյան թաղ.-ի 46,47 շ. տանող ճանապարհ – 158քմ, Դուրյան թաղ.-ի 482.-ից Չարենց թաղ. 11շ. տանող ճանապարհ – 210քմ, Դուրյան թաղ. 56, 57 շենքերի բակ -124քմ, Չարենց թաղ. 15, 9 շենքերին կից ճանապարհ -93քմ, Մայաթ-Նովա թաղ. 4, 7 շենքերին կից ճանապարհ - 46քմ, Մայաթ-Նովա թաղ. 8, 3 շենքերին կից ճանապարհ – 128քմ, Բոլորսուղ թաղ. 63, 68 շենքերին կից ճանապարհ -176քմ, Հ.Հովհաննիսյան թաղ. 50շ.-ից 26/2 շ. տանող ճանապարհ – 227քմ, Բսահակյան թաղ.3/3շ.-ից Ալմա Աթա փողոց տանող ճանապարհ – 114քմ, Բսահակյան թաղ.-2/3 շ.-ից 1/1շ. տանող ճանապարհ – 120քմ, Դ.Վարուժան թաղ. 5շ, 4շենքերին կից ճանապարհ – 117քմ, Դ.Վարուժան թաղ. 10շ.-ից Ալմա Աթա փող. Տանող ճան. -21քմ, Թումանյան թաղ.13/3շ.-ից 10շ. տանող ճան. - 66քմ, Թումանյան թաղ. 7/1շ-ից Ալմա Աթա փող. տանող ճան. – 57քմ, Թումանյան թաղ. 6/1շ-ից 46շ. տանող ճան.- 77քմ, Քուչակ թաղ. 49, 20, 48 շենքերին կից ճան. -82քմ, Քուչակ թաղ. 15շ.-ից Նարեկացի թաղ. 37շ. տանող ճան. – 118քմ, Նարեկացի թաղ.32,44,43,30 շենքերին կից ճան. -187քմ, Նարեկացի թաղ. 42,54, 36,39 շենքերին կից ճան. -385քմ, Ս. Նովա թաղ.8/2,1/4,1/3շ,1/2 շենքերի բակ-155քմ,Բոլորսուղ թաղ.,69 շենքի բակ-210քմ., Խուղյակով փ.,5-րդ նրբ.-71քմ.,Խուղյակով փ.,4-րդ նրբ.-300քմ.,Խուղյակով փ.,2-րդ նրբ.- 316քմ.,Խուղյակով փ.,3-րդ նրբ.-492քմ.,Ջահանգիր Աղայի փող.-340քմ.,Շահինյան փ.,5-րդ նրբ.-234քմ.,Շահինյան փ.,2-րդ նրբ.-210քմ.,Շահինյան փ.,1-ին նրբ.-271քմ.,Խուղյակով	«Արիովշին» ՍՊԸ 11.04.2018թ.- 01.10.2018թ.	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			փող., 1-ին նրբ.-323քմ., Թումանյան թաղ.,171դպրոցին կից ճանապարհ-95քմ., Ավանի 5-րդ փող.-1320քմ.,Ավանի 6-րդ փող.-582քմ., Խուղյակով փողոց-907քմ., Ա/Ա թաղ., 1մկշ., 2/5շ.; 4/1շ., 2/4շ.,5շ., 4շ., 1շ.ին կից ճանապարհ ---230քմ, Ա/Ա թաղ.,2մկշ., 2/9շ., 1/10շ., 1/13շ., 1/11շ-ին կից ճան.- 298քմ, Ա/Ա թաղ.,2մկշ., 1/8շ.,1/7շ., 2/6շ., 2/5շ., 1/1շ.-ին կից ճան.-267քմ, Ա/Ա թաղ.,2մկշ.,2/1 և 2/4 շենքերի շրջակայք-327քմ, Ա/Ա թաղ.,2մկշ., 1/3շ., 3/2շ., 3/12շ-ին կից ճան.-239քմ, Ա/Ա թաղ.,2մկշ.,1/4շ., 3/3շ., 2/2շ-ին կից ճան.-307քմ:		
1.2	Եզրաքարերի վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել 500 գծմ եզրաքարերի, 250 քմ գեղազարդ սալիկների նորերով փոխարինման աշխատանքներ:	<b>ԵՀԱՎՎՇ-18/1-6</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-7</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել են 887գծմ եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Դուրյան թ.,56,57 շենքեր-36գծմ., Դուրյան թ., 50շ.-38գծմ., Ա/Ա թ.,2մկշ., 2/4շ.-14գծմ., Չարենց թ.,15շ.,-11գծմ., Ա/Ա, թ., 1մկշ.,3/5շ.-ից 2/8շ.-74գծմ., Աճառյան փ.,«Բարեկամություն» այգի -28գծմ., Երիտասարդության փ.-460գծմ., Թամրուշի փ.,-111գծմ., Սաֆարյան փ.-25գծմ. Աճառյան փող. 30շ.՝ 90գծմ: Իրականացվել է 527 քմ. գեղազարդ սալիկների նորերով փոխարինման աշխատանքներ՝ հետևյալ հասցեներում «Հաղթանայի 40-ամյակի պուրակ»-180քմ., Աճառյան փ., «Բարեկամություն» այգի -14քմ. Ա/Ա թաղ. 1մկշ. «Ընտանիքի այգի»՝ 333 քմ:	Աշխատանքներն իրականացվել են վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից՝ «Դուրյան», «Չարենց» «Աճառյան», «Նարեկ» համատիրությունների հետ համատեղ: 11.04.2018թ.- 01.10.2018թ.	
1.3	Բակային տարածքների բարեկարգում	Կկառուցվեն 3 նոր այգիներ, խաղահրապարակներ և պուրակներ, կիրականացվի տարածքի վնասված գույքի՝ նստարանների, աղբամանների, ցանկապատների, խաղային համալիրների վերանորոգում և ներկում:	<b>ԵՀԱՎՎՇ-18/1-1,</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-2,</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-3,</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-4,</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-5,</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-6,</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-7,</b> <b>ԵՀԱՎՎՇ-18/1-8,</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Կառուցվել են 7 նոր այգիներ, խաղահրապարակներ և պուրակներ հետևյալ հասցեներում՝ 1.Ա/Ա թ.,1մկշ.,2/4շ. - պուրակի կառուցում/, 2.Աճառյան փող. 22Գ շ. - պուրակի կառուցում, 3.Աճառյան փող. 26/2շ. - պուրակի կառուցում, 4.Խուղյակով փող. 84/1շ.,84/2շ., 84/3շ. բակ.- զբոսայգու, խաղահրապարակի կառուցում, 5.Բրյուսով թաղ. 70շ.	Աշխատանքներն իրականացվել են վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից՝ «Դուրյան»,«Չարենց», «Ավան»,«Ավան-3», «Ավան-4»,«Նարեկ», «Ավան-Առինջ-1», «Աճառյան», համատիրությունների հետ համատեղ:	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>- բակային տարածքի բարեկարգում, պուրակի կառուցում, 6.Ա/Ա թաղ., 2մկշ., 1/8շ. - բակային տարածքների բարեկարգում, պուրակի կառուցում, 7.Դուրյան 38շ.-բակային տարածքի բարեկարգում, պուրակի կառուցում:</p> <p>Իրականացվել են վերանորոգման աշխատանքներ հետևյալ բակային տարածքներում՝ Աճառյան փ., 30,36 շենքեր-խաղահրապարակի վերանորոգում, Ա/Ա թ., 2մկշ.,2/8շ.- խաղահրապարակի վերանորոգում, Բրյուսով թ.,69շենքի դիմաց-ֆուտբոլի դաշտի բարեկարգում, Քուչակ թ.,49շ.-Թումանյան թ.,12/1շ.-աստիճանների բազրիքների տեղադրում-170գծմ /ավարտված/, Նարեկացի թ., 36շ-41 շենքեր - այգու բարեկարգում: Դուրյան թ., 37շ.- պուրակի վերանորոգում, Չարենց թ. «Հաղթանակի 40-ամյակի» այգու վերակառուցում, Ա/Ա թ., 2մկշ., 3/5շ.-2/8շ բակային տարածքի բարեկարգում: Աճառյան փող. 26շ. –խաղահրապարակի վերակառուցում, «Բարեկամության այգի» - հուշակոթողի կառուցում, Աճառյան փող. 53 մանկ. – խաղահրապարակի կառուցում, Բրյուսով թաղ. 68,69շշ. - բակային տարածքների բարեկարգում, պուրակի վերակառուցում, Սայաթ-Նովա թաղ. 3շ. – բակային տարածքների բարեկարգում, Բրյուսով թաղ. 62-71շշ.- աստիճանների վերանորոգում, Բրյուսով թաղ. 62շ.-ից Թամրուշի փող. տանող աստիճանների վերանորոգում, Դուրյան թաղ., 32շ. –բակային տարածքի բարեկարգում, Դուրյան թաղ.43շ. - բակային տարածքների բարեկարգում, աստիճանների կառուցում, Դուրյան թաղ. 42շ., - բակային տարածքների բարեկարգում, Դուրյան թաղ. 35շ. - բակային տարածքների բարեկարգում, Քուչակ 47շ.,48շ. հարևանությամբ- ֆուտբոլի դաշտի վերակառուցում՝ 330 քմ, Ավան-Առինջ 2մկշ. 2/3շ. – հենապատի կառուցում, աստիճանների վերանորոգում:</p>	<p>03.04.2018թ.- 30.09.2018թ.</p>	
1.4	Այլ աշխատանքներ	Հենապատերի վերանորոգում	<p><b>ԵՀԱՎՎՇ-18/1-7</b></p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել են 370,4քմ հենապատի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Քուչակ 48շ.,49շ. – 65քմ; Երիտասարդության փ.-20 քմ.,Ա/Ա թ., 1մկշ.,2/4շ.- 40 քմ.Չարենց թ., 14շ-55 քմ.; Ա/Ա թ., 2մկշ., 2/8շ.-48քմ. Աճառյան փող., 53 մանկ.՝ 73,4քմ, Չարենց թաղ., 18շ. բակ՝ 48քմ, Դուրյան թաղ. 31շ. բակ՝ 21քմ:</p>	<p>Աշխատանքներն իրականացվել են վարչական շրջանի դեկավարի աշխատակազմի կողմից՝ «Դուրյան», «Չարենց», «Ավան», «Ավան-3», «Ավան-4», «Նարեկ», «Ավան-Առինջ-1», «Աճառյան»</p>	

				համատիրությունների հետ համատեղ: 03.04.2018թ. - 30.09.2018թ.	
<b>2</b>	<b>Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում</b>				
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	2018թ. ընթացքում վարչական շրջանի բոլոր թաղամասերում և փողոցների հարակից տարածքներում նախատեսվում է ընդարձակել կանաչ տարածքները: Նախատեսվում է նաև խիտ բնակեցված	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/6-10</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: 1. Իրականացվել է 935960 քմ անցուղիների, հրապարակների, աստիճանավանդակների մաքրման աշխատանքներ, 2. Կատարվել է 341000 քմ կոմբինացված սիզամարգերի հունձ, 3. Իրականացվել է 341000 քմ հնձված խոտի հավաքում սիզամարգերից, 4. Իրականացվել է 151500 քմ մինչև 40մ երկարությամբ՝ ռետինե խողովակով ոռոգում, 5. Կատարվել է 21805 հատ ծառերի կրապատման աշխատանքներ, 6. Կատարվել է 1150 քմ զբոսայգիների ճանապարհների հրապարակների անցուղիների մաքրում ձնից:	«Ավան-Կանաչապատում» ՓԲԸ 10.01.2018թ.- 25.12.2018թ.	
2.2	Ծաղկային տարածքների ստեղծում և խնամք	թաղամասերում բարեկարգել բակային այգիները տեղադրել մանկական խաղեր և նստարաններ, իրականացնել ծառատունկ, թփերի տնկում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում:	1. Տնկվել են 139815 հատ ծաղկասածիլներ, 2. Իրականացվել է 17000 քմ ծաղիկների քաղհան, 3. Իրականացվել է 13597 քմ ծաղիկների սնուցում, 4. Կատարվել է 819450 քմ սիզամարգերի և ծաղկային տարածությունների ոռոգում, 5. Իրականացվել է 60000 հատ վարդակակաչների սնուցում, 6. Կատարվել է 60000 հատ սոխուկների հանման, հողի նախապատրաստման աշխատանքներ 7. Կատարվել է վարդերի թփերի՝ 3870 հատ էտ, 4500 քմ միջշարքային տարածությունների փորում, 2000 հատ տնկում, 3870 հատ քաղհան, 18000քմ սնուցում, 6150 հատ բուկլից 8. Իրականացվել է 14740 քմ չորացած ծաղիկների ցողունների հավաքում		
2.3	Ծառատունկ		Իրականացվել է 1100 հատ ծառերի և թփերի տնկում:		
2.4	Չոր ծառերի հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		1. Իրականացվել է 342 հատ ծառերի երիտասարդացման և խորը էտման աշխատանքներ՝ մինչև 30սմ և 30սմ-ից ավելի բնի հաստությամբ 2. Վարչական շրջանի տարածքում կատարվել են 18891 մացառների հեռացման աշխատանքներ ձեռքով:		

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

2.5	Այլ աշխատանքներ	Հուշարձանների պահպանում	Իրականացվել է 10 հուշարձանների և հարակից տարածքների պահպանում և խնամք /13400քմ/:		
		Ոռոգման ցանցի վերանորոգում	Իրականացվել է 2700 գծմ ոռոգման ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանք:		
		Գետառի հունի մաքրում	Տարվա ընթացքում իրականացվել է «Գետառ» գետի՝ Ավան վարչական շրջանի տարածքով անցնող հատվածի մաքրման աշխատանքներ:	«Դավարս» ՍՊԸ 05.02.18թ.-27.05.18թ.	
<b>3 Բնակարանային ֆոնդի շահագործում, սպասարկում և նորոգում</b>					
3.1	Հարթ տանիքների նորոգում /իզոգամ/	Նախատեսվում է իրականացնել հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ՝ ընդհանուր 8000քմ մակերեսով	<p><b>ԵՔ- ԲՄԱՇՁԲ-18/41-1</b></p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել է 13,981,2 քմ. հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Ա/Ա թ., 2 մկշ., 1/12շ.-33.7 քմ., Ա/Ա թ., 2 մկշ., 1/11շ.-210.0քմ., Ա/Ա թ., 2 մկշ., 2/5շ.,-100.9քմ. Ա/Ա թ., 2 մկշ., 1/17շ.-130.2 քմ., Ս. Նովա թ., 1/5շ.- 100.3 քմ., Թումանյան թ., 11շ.-43.0 քմ., Թումանյան թ., 8շ.- 151.0 քմ., Թումանյան թ., 12/2շ.-71.0քմ., Դ. Վարուժան թ., 4շ.-20.0 քմ., Դ. Վարուժան թ., 6շ.-20.0 քմ., Դ. Վարուժան թ., 8շ.-208 քմ., Դ. Վարուժան թ., 10շ.-56.3քմ., Բրյուսով թ., 63շ.-130.2 քմ. Բրյուսով թ., 64շ.-208.0 քմ., Իսահակյան թ., 1/1շ.-130.0 քմ., Իսահակյան թ. 1/2շ.-133.0 քմ., Իսահակյան թ. 1/3շ.-32.1 քմ. Իսահակյան թ. 2/2շ.-69.7 քմ., Իսահակյան թ. 3/1շ.-72.15 քմ. Իսահակյան թ. 3/2շ.-97.0քմ., Հ. Հովհաննիսյան թ., 26/2շ.-140.6 քմ, Խուդյակով փ., 84/3շ.-298քմ., Թումանյան թ., 7/1շ.,-130,10քմ., Չարենց թաղ., 15շ.-108քմ, Չարենց թաղ. 10շ., -40քմ., Չարենց թաղ. 12շ.-98քմ, Չարենց թաղ. 13շ.-105քմ., Ա/Ա թաղ., 1 մկշ 2/13շ.-108քմ, Ա/Ա թաղ., 1 մկշ 1/1.- 121քմ, Ա/Ա թաղ., 2 մկշ 1/7շ.-130,20քմ, Ա/Ա թաղ., 1 մկշ 2/14շ.- 135քմ, Ա/Ա թաղ., 1 մկշ 1/10շ.-200քմ, Ա/Ա թաղ., 2 մկշ 2/9շ.- 80քմ, Ա/Ա թ., 1 մկշ., 3/3- 43,20քմ., Ա/Ա թ., 2-րդ մկշ., 2/5շ-65,82քմ., Ա/Ա թ 1 մկշ., 2/13շ.-65,29քմ., Ա/Ա թաղ. 2-րդ մկշ., 2/6շ-85,46քմ, Ա/Ա թ., 1-ին մկշ., 3/2շ.-37,07քմ Ա/Ա թ., 1 մկշ., 3շ.-19,140քմ, Ա/Ա թաղ., 1-ին մկշ., 4/2շ.-37,46քմ, Բրյուսով թ. 69շ.-54քմ, Բրյուսով թ. 68շ.-139,47քմ, Բրյուսով թ. 67շ.- 45,27 քմ, Բրյուսով թ. 62շ.-69,98 քմ, Ս. Նովա թաղ., 1/3շ.-54,99քմ, Ս. Նովա թաղ ., 1/4շ.-92,00քմ, Ս. Նովա թաղ., 4շ.-118,19քմ, Վարուժան թաղ. 9շ.-54,4 քմ., Դուրյան թաղ., 34շ.-35,95,քմ, Դուրյան թաղ., 33շ.-71,57քմ, Դուրյան թաղ., 35շ.-28,8քմ, Դուրյան թաղ., 44շ.-42,56 քմ, Դուրյան թաղ., 29շ.-26,50քմ, Դուրյան թաղ., 30շ.-133,69քմ, Դուրյան թաղ., 48շ.-310,08քմ, Բուչակ թաղ. 15շ.- 54,44 քմ, Դուրյան թաղ. 28շ.-28,85քմ, Ա/Ա թաղ., 2 մկշ. 1/15շ.- 105,7 Ա/Ա թ., 1 մկշ. 4շ.- 157,90քմ, Ա/Ա թ., 2 մկշ. 2/11շ.-116,70քմ, Ա/Ա թ., 1 մկշ. 2/10շ.-20,5քմ, Ա/Ա թաղ. 2/1շ.- 44,6քմ, Ա/Ա թաղ., 2/3շ.-45քմ, Ա/Ա թաղ., 2/2շ.-127.80քմ, Ա/Ա թաղ., 1 մկշ. 2/12շ-63քմ, Իսահակյան թաղ., 45շ.-30քմ, Նարեկացի</p>	«Վահրադյան Շին» ՍՊԸ 15.03.2018թ- 30.08.2018	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>թաղ.372-46,31քմ, Նարեկացի թաղ.362-26,5քմ, Աճառյան փող. 442.-19քմ, Բաբաջանյան փող. 38,3922-38,35քմ, Նարեկացի թաղ. 312.- 89,73քմ, Նարեկացի թաղ. 442.- 100 քմ, Նարեկացի թաղ. 432.- 132,9քմ, Նարեկացի թաղ. 422- 36,31 քմ, Նարեկացի թաղ. 302.- 18,32քմ, Նարեկացի թաղ. 392.- 27քմ, Թումանյան թաղ. 6/12.-132քմ, Չարենց թաղ.102.- 40քմ., Աճառյան փող. 222.-18,48 քմ, Աճառյան փող. 202.-17,52 քմ, Ավան-Առինջ թաղ.,2-րդ մկշ., 2/102.-120,69քմ, Իսահակյան թաղ.,3/32.-27,2 քմ., Քուչակ թաղ. 212.- 171,8 քմ, Հ. Հովհաննիսյան թաղ.,25/22.-36,04քմ, Հ. Հովհաննիսյան թաղ.,292.-35,4 քմ, Քուչակ թաղ. 142.- 114,16 քմ, Քուչակ թաղ. 472.- 94,3 քմ, Ավան-Առինջ թաղ.,2-րդ մկշ., 2/72-122,57քմ., Իսահակյան թ.,2/12.-61,47 քմ, Վարուժան թաղ.72.- 84,76 քմ, Ավան-Առինջ թաղ.,1-ին մկշ.,3/8- 45 քմ., Թումանյան թ.13/32.-76 քմ., Քուչակ թաղ. 192.- 24,9 քմ., Քուչակ թաղ. 492.- 25,8 քմ. Իսահակյան թաղ.,42.-44,47 քմ., Խուդյակով թաղ. 68 շ.- 190 քմ., Ա/Ա 1մկշ. 1/32 - 154,5քմ, Ա/Ա 1մկշ 1/82-236,92քմ, Ա/Ա 1մկշ 2/52.-202,09քմ, Ա/Ա 1մկշ 3/92- 127,17քմ, Ա/Ա 1մկշ 3/112- 48,5քմ, Ա/Ա 2մկշ 1/92. - 116,27քմ, մԱ/Ա 2մկշ 1/152. -38,86քմ, Ա/Ա 2մկշ 1/12.- 230,43քմ, Ա/Ա 2մկշ 1/22.- 394,5քմ, Ա/Ա 2մկշ 1/82- 398քմ, Ա/Ա 21մկշ 2/82. -123,54քմ, Սյաթ-Նովա թ. 8/22.- 363,8քմ, Թումանյան թ. 6/22.-311,3քմ, Թումանյան թ., 13/12.- 216քմ, Թումանյան թ. 102. -66,52քմ, Քուչակ թ. 2252. -138,64քմ, Դուրյան թաղ. 502.- 97,7քմ, Դուրյան թաղ. 472.-28,66քմ, Դուրյան թաղ. 422.- 59,94քմ, Դուրյան թաղ.492.-9քմ, Դուրյան թաղ. 392.-62,57քմ Իսահակյան թ .52.- 64,72քմ, Հ.Հովհաննիսյան թ. 24/32.-121,19քմ, Հ.Հովհաննիսյան թ. 282.-179.94քմ, Հ.Հովհաննիսյան թ.25/12.-92,91քմ, Խուդյակով փող. 84/12.-216քմ, Չարենց թաղ. 92.-263,36քմ, Չարենց թաղ. 172. -100քմ, Չարենց թաղ. 182. - 363,69քմ, Նարեկացի թաղ.332.-22,2քմ, Նարեկացի թաղ. 542.-279,26քմ, Աճառյան փող 26/22.-300,9քմ</p> <p><b>«Չարենց»</b> համատիրության միջոցներով վերանորոգվել է 459 քմ հարթ տանիք հետևյալ հասցեներում՝ Չարենց թաղ.-92.,102.,132.,152.,162.,172., Դուրյան թաղ. 312.,322., 342.,382.:</p> <p><b>«Ավան-4»</b> համատիրության միջոցներով վերանորոգվել է 27 գծմ հարթ տանիք Թումանյան թաղ. 13/12.,12/22., հասցեներում:</p>		
3.2	Թեք տանիքների նորոգում /ազրոհերձաքար/	Նախատեսվում է թեք տանիք ունեցող բնակելի 2 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների	<p><b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/24</b></p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել են 1190 քմ թեք տանիքի վերանորոգման աշխատանքները Աճառյան փող.,22. և 322. հասցեներում:</p>	«Գազկոմշին» ՍՊԸ 14.02.2018թ- 30.08.2018թ	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		վերանորոգման աշխատանքներ՝ 1150քմ մակերեսով:			
3.3	Վերելակների հիմնանորոգում	Նախատեսվում է 6 վերելակների վերանորոգման աշխատանքներ:	<p><b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/60</b></p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել են վերելակների վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Ա/Ա թաղ., 1մկշ., 1/7շ. Քուչակ թ.,21շ., Թումանյան թ.,10շ., Բրյուսով թ.,69շ., Իսահակյան թ.,5շ., 3/3շ., Հ. Հովհաննիսյան թ., 24/2շ.-2մ., Դուրյան թ., 47շ.-2մ., Ա/Ա թ., 1 մկշ., 3/3շ., Աճառյան փող. 18շ.-1մուտք, Ա/Ա թաղ., 1մկշ., 1/7շ., Նարեկացի թաղ. 41շ.:</p> <p>«Նարեկ» համատիրության միջոցներով վերանորոգվել է 72 վերելակ:          «Աճառյան» համատիրության միջոցներով վերանորոգվել է 22 վերելակ:          «Դուրյան» համատիրության միջոցներով վերանորոգվել է 25 վերելակ:          «Չարենց» համատիրության միջոցներով վերանորոգվել է 20 վերելակ:          «Ավան-3» համատիրության միջոցներով վերանորոգվել է 21 վերելակ:          «Ավան-4» համատիրության միջոցներով վերանորոգվել է 22 վերելակ:          «Ավան» համատիրության միջոցներով վերանորոգվել է 24 վերելակ:</p>	«Մարութա Սար» ՍՊԸ 29.12.2017թ.- 30.09.2018թ.	
1.2	Բակային տարածքների բարեկարգում	Նորքի 13-րդ փողոցի վերջնամասում կկառուցվի հասարակական նշանակության հանգստի գոտի՝ կիրականացվեն բարեկարգման աշխատանքներ, կտեղադրվեն նստարաններ, աղբամաններ, կիրականացվի արտաքին լուսավորության ցանցի անցկացում: Իրականացվելու են նաև նախկինում կառուցված բակերի և	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/63</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ՝ Նորքի 5 փող. թիվ 61 դպրոցի հարակից տարածքում պուրակի կառուցման աշխատանքների համար: <b>Մ-08</b> Նախկինում կառուցված բակերի և խաղահրապարակների ընթացիկ նորոգման աշխատանքների նպատակով կնքվել է աշխատանքների իրականացման պայմանագիր: Աշխատանքներն իրականացվել են նախատեսված ծավալով: Նորքի 7-րդ փող. N 123 մանկ. հարևանությամբ, Նորքի 1-ին նրբանցք այգու բակ	«Վանդաժի» ՍՊԸ 01.04.2018թ. – 30.07.2018թ.  «Կանաչ բարձրունք» ՓԲԸ 11.01.2018թ. – 25.12.2018թ.	Նորքի 13-րդ փողոցի վերջնամասում հասարակական նշանակության հանգստի գոտու կառուցմա

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		խաղահրապարակների ընթացիկ նորոգման աշխատանքներ:			ն նախագծի փոխարեն բյուջեյով հաստատվ ել է Նորքի 5 փող. թիվ 61 դպրոցի հարակից տարածքի նախագիծ ը: Շինարար ական աշխատա նքները չեն իրականա ցվել, քանի որ այգու կառուցմա ն համար նախատես ված հողատար ածքը վեճի առարկա է հանդիսաց ել բնակիչներ ի կողմից:
1.3	Այլ աշխատանք	Կկառուցվեն թեքահարթակներ: Իրականացվելու է խմելու			Երևանի 2018թ.

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	ներ	ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ:			բյուջեով նմանատիպ ծախսեր նախատեսված չեն եղել:
<b>Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում</b>					
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	Նախատեսվում է կանաչապատ տարածքների մակերեսը հասցնել 1.2 հա: Նախատեսվում է նաև Նորքի անտառների վերականգնմանն ուղղված աշխատանքներ:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ- 18/6-5</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ: Կարչական շրջանի կանաչ տարածքներում իրականացվել են տարածքների խնամք, ծառերի խորը էտ, վարդերի թփերի սնուցում ու ծառերի տնկում և ձևավորում, կանաչ տարածքների բարելավում և մշակում: Կանաչ տարածքների մակերեսը կազմում է 1.2 հա:	«Կանաչ բարձրունք» ՓԲԸ 09.01.2018թ.- 25.12.2018թ.	
2.2	Ծաղկային տարածքների ստեղծում և խնամք		Ըստ պայմանագրի իրականացվել է վարդերի մշակման և նոր ծաղիկների տեղադրման աշխատանքներ:		
2.3	Ծառատունկ		Տնկվել է 80 ծառ:		
2.4	Չոր ծառերի հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		Իրականացվել է թվով 63 վթարային ծառերի էտ, ծառերի երիտասարդացում մինչև 30 սմ-76 հատ, 30 սմ-ից ավել՝ 28 հատ:		
2.5	Ոռոգման ցանցի վերանորոգում	Կիրականացվեն մոտ 410 գծմ ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքներ՝ կանաչ տարածքների խնամքն ու պահպանումն ապահովելու համար:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ, որը չի կայացել:		Բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները չեն

					բավարարել նախագծով նախատեսված աշխատանքների իրականացմանը:
<b>Կրթություն, մշակույթ և սպորտ</b>					
4.1	Կրթություն	Նախատեսվում է մանկապարտեզների ավարտական խմբերի 1-ին դասարան հաճախող երեխաներին դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում: Նախատեսվում է Ա.Իսահակյանի անվան գրադարանի մասնաճյուղի գրքային ֆոնդի համալրում, երաժշտական դպրոցի համար երաժշտական գործիքների ձեռքբերում, նոր ժամանակակից գույքի ձեռքբերում, մարզադպրոցի համար անհրաժեշտ մարզագույքի ապահովում:	Երևանի քաղաքապետարանի ծրագրով Նորք-Մարաշ վարչական շրջանի 160 ընտանիքների երեխաներին տրամադրվել է դպրոցական պայուսակներ սեպտեմբերի 1-ի կապակցությամբ:		Նախատեսված Ա. Իսահակյանի անվան գրադարանի մասնաճյուղի գրքային ֆոնդի համալրումը և երաժշտական դպրոցի համար երաժշտական գործիքների

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

					ձեռքբերման ծախսերը բյուջեով չեն հաստատվել:
4.2	Մշակույթ	<p>Իրականացվելու է 25 միջոցառում նվիրված ՀՀ ազգային տոներին և հիշատակի, որոնց մասնակից կդառնան կրթական և մշակութային հաստատությունների սաները և բնակիչները:</p>	<p><b>«ԵՔ-ԲՄՉՁԲ-18/20-1»</b>                      Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:                      Նորք-Մարաշ վարչական շրջանում Երևան քաղաքի 2018թ. տարեկան ծրագրով իրականացվել է 22 միջոցառում –                      1.«Բանակի օր» տոնակատարություն, 2.«Տեառնընդառաջի տոնակատարություն»,                      3. «Բարեկենդանի տոնակատարություն»,                      4.«Կանանց տոն-Մարտի 8»                      5.«Սուրբ Զատիկի տոնակատարություն», 6.Ապրիլի 7 «Մայրության և զեղեցկության տոն»,                      7.«Եղեռնի 103-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ»,                      8.«Հաղթանակի և Խաղաղության /Մայիսի 9/», 9.«Երեխաների իրավունքների պաշպանության միջ. Օր»,                      10.«ՀՀ առաջին հանրապետության տոն», 11.«Վերջին զանգի տոնակատարություն», 12.«Համբարձման տոն»,                      13«Ցտեսություն մանկապարտեզ» տոնակատարություն,                      14.«ՀՀ պետական խորհրդանշանների և Սահմանադրության օր»,                      15.«Ուրախ ամառ երջանիկ մանկություն», 16.«Բակային ճամբարների»,                      17.«Գիտելիքի օր» տոնակատարություն,                      18.«ՀՀ Անկախության օր» տոնակատարություն,                      19. Նոր Մարաշի վերածնության օր, 20.Ուսուցչի օր,                      21.Թարգմանչաց տոն,                      22.Ամանորյա տոնակատարություն (3 միջոցառում՝ մանկապարտեզներում, վարչական շրջանի հարակից այգում,</p>	<p>«Հաղթանակ 2000»                      ՄՊԸ                      24.01.2018-                      25.12.2018թ.</p>	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			վարչական շրջանի աշխատակազմում): Բոլոր նախատեսված միջոցառումները իրականացվել են ամբողջ ծավալով:		
4.3	Սպորտ	2018թ. ընթացքում, առողջ ապրելակերպի քարոզման նպատակով, կկազմակերպվեն 26 սպորտային միջոցառումներ, մարզական խաղեր՝ բնակչության տարբեր տարիքային խմբերի մասնակցությամբ:	<p><b>«ԵՔ-ԲՄՉՁԲ-18/23-1»</b></p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Նորք-Մարաշ վարչական շրջանում Երևան քաղաքի 2018թ. ծրագրով իրականացվել է 12 մարզական միջոցառում՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր (7միջոցառում՝ ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, հեծանվավազք, շախմատ)</li> <li>2.«Երեխաների պաշտպանության միջազգային օր»</li> <li>3. Լավագույն մարզական ընտանիք</li> <li>4.ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն</li> <li>5.«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոն (7միջոցառում՝ ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, հեծանվավազք, շախմատ)</li> <li>6.Մասնակցություն լայնամասշտաբ սպորտային միջոցառումներին</li> <li>7.Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդների 2018թ, հանրապետական ռազմամարզական խաղեր</li> <li>8.Շախմատի Երևան քաղաքի 2018թ. թիմային առաջնություն</li> <li>9. Շախմատի օլիմպիադա</li> <li>10.Ըմբշամարտի հուշամրցաշար կազմակերպում</li> <li>11. «Կաշվե գնդակ» ֆուտբոլի առաջնություն</li> <li>12.Սպորտային բաց առաջնությունների մասնակցություն:</li> </ol> <p>Բոլոր նախատեսված միջոցառումները իրականացվել են ամբողջ ծավալով:</p>	«Հաղթանակ 2000» ՍՊԸ 08.02.2018- 25.12.2018թ.	
<b>Սոցիալական ապահովություն</b>					
5.1	Աջակցությա	Նախատեսվում է պետպատվերի	Պետպատվերի շրջանակներում բուժօգնության ստացման		

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>ն ծրագրեր</p>	<p>շրջանակում, բուժօգնություն ստանալու համար միջնորդագրեր տրամադրել թոշակառուներին և հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին:</p> <p>Կկազմակերպվի երեխաների, սոցիալապես խոցելի խմբերի և վետերանների ամառային հանգիստը ճամբարներում:</p> <p>Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին կտրամադրվեն դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:</p>	<p>նպատակով միջնորդություն է ներկայացվել 10 շահառուի համար:</p> <p><b>ԵՔ-ԳՀՄՁԲ-18/25-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ: Երեխաների ամառային հանգստի կազմակերպման նպատակով ճամբար է ուղարկվել 60 երեխա:</p> <p><b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/64</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ: 2018թ. ընթացքում Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակազմի կողմից թվով 160 սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների տրամադրվել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:</p> <p><b>ԵՀ-18/4-3</b> Դրամական աջակցություն է ցուցաբերվել 39 շահառուի: Հայրենական Մեծ Պատերազմի մասնակիցներին տրամադրվել է դրամական օգնություն: Տրամադրվել է ֆինանսական օգնություն Արցախյան և քառօրյա պատերազմների 57 մասնակիցների: Նորք-Մարաշ վարչական շրջանի զոհված ազատամարտիկների, խաղաղ պայմաններում մահացած ազատամարտիկների և զոհված զինծառայողների 21 ընտանիքների տրամադրվել է դրամական օգնություն:</p> <p><b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/211</b> <b>ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/2</b> Ամանորի կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքներին, ՀՄՊ և Արցախյան պատերազմի մասնակից վետերաններին, ինչպես նաև զոհված ազատամարտիկների շուրջ 445 ընտանիքի հատկացվել է օգնություն բնամթերքի տեսքով և թվով 4 մանկապարտեզի երեխաներին և Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում գտնվող հատուկ դպրոցի և մանկան տան երեխաներին հատկացվել է 650 ամանորյա փաթեթներ:</p>	<p>«Բաս Վոյաժ» ՍՊԸ 01.07.2018թ. – 31.08.2018թ.</p> <p>«Արմքոմփլիններ» ՍՊԸ 22.03.2018թ. – 26.06.2018թ.</p> <p>«Երևան» Հիմնադրամ 24.01.2018թ.- 05.06.2018թ.</p> <p>«Դեազա» ՍՊԸ 07.12.2018թ-25.12.2018թ «ՌՎ Պրոզեկտս» ՍՊԸ 19.12.2018թ-25.12.2018թ</p>	
5.2	Համագործա	Կշարունակվի	Շարունակաբար իրականացվել են սիրահայերի աջակցության		

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

<p>կցություն</p>	<p>համագործակցությունը հովանավոր կազմակերպությունների և անհատ բարերարների, մայրաքաղաքում գործող թատրոնների և մշակույթի տների հետ՝ վարչական շրջանում բնակվող կարիքավոր ընտանիքներին թատերական և համերգային ծրագրերին մասնակից դարձնելու նպատակով:</p> <p>Համագործակցելով անհատ բարերարների և հասարակական կազմակերպությունների հետ՝ նյութական և պարենային աջակցության կցուցաբերվի սոցիալապես անապահով ընտանիքներին, ՀՄՊ և Արցախյան պատերազմի մասնակից վետերաններին, ինչպես նաև գոհված ազատամարտիկների ընտանիքներին:</p>	<p>ծրագրեր՝ 7 շահառու, Մարտի 8-ի կապակցությամբ անապահով ընտանիքների կանանց տրամադրվել են 35 ներկայացման տոմսեր, հագուստի, կոշիկի և բնամթերքի տեսքով աջակցություն է ցուցաբերվել 6 սոցիալապես անապահով ընտանիքի, անապահով 6 ընտանիքի տրամադրվել է բնամթերային աջակցություն:</p> <p>9 շահառու Ապրիլի 7-ի կապակցությամբ և 4 և ավելի երեխա ունեցող 6 մայրերի տրվել է ֆինանսական աջակցություն</p>		
------------------	---	---	--	--

Նուբարաշեն վարչական շրջան					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կատարման ժամկետ	Նշումներ

<b>Տարածքային բարեկարգման աշխատանքներ</b>					
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	Կիրականացվեն մայթերի և փողոցների ասֆալտապատման աշխատանքներ:	<b>ԵՔ-ԲՄԱՇՉԲ-18/61-9</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Իրականացվել են 2350 քմ ասֆալտապատման և փոսանորոգման աշխատանքներ: Ասֆալտապատման աշխատանքներ են իրականացվել՝ 1-ին, 6-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ փողոցներում, 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ փողոցներում, 11փ. 12-րդ շենքի և 16-րդ շենքերի բակային տարածքներում, «Ա», «Բ», «Գ», «Դ», «Ե» թաղամասերում իրականացվել են 7467քմ փոսանորոգման աշխատանքներ:	«Արհովշին» ՍՊԸ 11.04.2018թ.-01.10.2018թ.	
1.2	Եզրաքարերի վերանորոգում		Վարչական շրջանի 6-րդ, 9-րդ, 10-րդ փողոցներում վերանորոգվել են 180 գծմ եզրաքարեր:	«Նուբարաշեն» ՓԲԸ 15.08.2018թ.-30.09.2018թ.	
1.3	Բակային տարածքների բարեկարգում	Շարունակական բնույթ են կրելու խաղահրապարակների, զբոսայգիների, բակերի, ընթացիկ նորոգման աշխատանքները: Բակային տարածքներում կտեղադրվի 2 մանկական խաղ, 2 սպորտային խաղ, 4 զրուցարան, 15 նստարան և 10 աղբաման: Նուբարաշեն 11 փողոցի 12-րդ և 16-րդ բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում կկառուցվեն 2 նոր խաղահրապարակներ:	<b>ԵՔ-ԲՄԱՇՉԲ-18/49</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Բակերի համալիր բարեկարգման ծրագրի շրջանակում բակերում տեղադրվել են 2 մանկական խաղ, 2 սպորտային խաղ, 4 զրուցարան, 15 նստարան և 10 աղբաման: Նուբարաշեն 11 փողոցի 12-րդ և 16-րդ բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում կառուցվել են 2 նոր խաղահրապարակներ:	«Յան Բիլդինգ» ՍՊԸ 23.03.2018թ.-31.08.2018թ.	
1.4	Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում	Կիրականացվեն արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ:	Փոխարինվել են արտաքին լուսավորության ցանցի 390 այրված լամպ, որից 97-ը էկոնոմ տեսակի հետևյալ հասցեներում՝ Նուբարաշեն 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ փողոցներում, 7-րդ, 9-րդ, 11-րդ փողոցների զբոսայգիներում,	«Երբադլույս» ՓԲԸ 08.01.2018թ.-28.12.2018թ.	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			11 փողոց 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ շենքերի բակերում:		
1.5	Այլ աշխատանքներ	Տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար կկառուցվեն թեքահարթակներ: Կբարեկարգվեն փողոցները, մայթերը և եզրաքարերը:	<b>ԵՔ-ԲՄԱՇՉԲ-18/49</b> Նուբարաշեն 11 փողոցի 12-րդ և 16-րդ բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում կառուցվել են 4 թեքահարթակներ:	«Յան Բիլլինգ» ՍՊԸ 23.03.2018թ.-31.08.2018թ.	
<b>2. Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում</b>					
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	Աշխատանքներ կիրականացվեն կանաչ տարածքների ընդլայնման, խնամքի ու պահպանության ուղղությամբ: Նախատեսվում է զբոսայգիներում, պուրակներում, ինչպես նաև կենտրոնական փողոցներում տնկել թվով 520 ծառեր և տնկիներ:	<b>ԵՔ-ԲՄԱՇՉԲ-18/6-4</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:  Կանաչ տարածքների պահպանման աշխատանքներ իրականացվել են կենտրոնական զբոսայգում, 11-րդ փողոցի հարակից զբոսայգում, 6-րդ փողոցի պուրակում, Պողոս Նուբարի անվան պուրակում և գազոնային հատվածներում: Իրականացվել է խոտհունձ, սիզամարգերի մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից:	«Նուբարաշենի կանաչապատում» ՓԲԸ 24.01.2018թ.-25.12.2018թ.	
2.2	Ծաղկային տարածքների ստեղծում և խնամք		Վարչական շրջանի 6-րդ, 9-րդ, 13-րդ, փողոցներում, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ փողոցների զբոսայգիներում, 11 փողոց 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ շենքերի բակերում իրականացվել են նոր ծաղկային ձևավորումներ, տնկվել է 32 000 ծաղիկ:		
2.3	Ծառատունկ		Նուբարաշեն 6-րդ, 9-րդ, 10-րդ փողոցներում, 6-րդ, 9-րդ, 11-րդ փողոցների զբոսայգիներում տնկվել է 1155 ծառ:		
2.4	Հուշարձանների պահպանում		Վարչական շրջանում առկա հուշարձանները չեն վնասվել, իրականացվել են ընթացիկ մաքրման աշխատանքներ:		
2.5	Չոր ծառերի հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		Իրականացնել է թվով 137 ծառերի էտ: Աշխատանքներն իրականացվել են 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ փողոցներում, 11 փ. 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ շենքերի բակերում, 11 փողոցի հարակից զբոսայգում և կենտրոնական զբոսայգում:		
<b>3. Բնակարանային ֆոնդի շահագործում, սպասարկում և նորոգում</b>					

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

3.1	Թեք տանիքների նորոգում /ազբոհերձաքար/	Կհիմնանորոգվի մեկ բազմաբնակարան շենքի թեք տանիք:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/16</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Հիմնանորոգվել է Նուբարաշեն 11-րդ փողոց 10 -րդ շենքի թեք տանիքը:	«Արհովշին» ՍՊԸ 12.02.2018թ.-30.08.2018թ.	
3.2	Մուտքերի վերանորոգում	Կվերանորոգվեն բազմաբնակարան շենքերի 20 շքամուտքեր:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/40-9</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի 12 շքամուտքեր հետևյալ հասցեներում՝ 6-րդ փողոց 1/2-րդ /1 մուտք/, 1/3-րդ /1 մուտք/, 11 փողոցի 2-րդ /3 մուտք/, 3-րդ /3 մուտք/, 10-րդ / 4 մուտք/ շենքերում:  Նուբարաշեն 9 փողոց 1-ին և 6 փողոց 130-րդ շենքերում իրականացվել են թվով 2 շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:	«Արհովշին» ՍՊԸ 12.02.2018թ.-30.08.2018թ.  «Նուբարաշեն» համատիրություն	Բյուջեով հաստատվել է 12-ը շքամուտքերի վերանորոգում

**4 .Կրթություն, մշակույթ և սպորտ**

4.1	<b>Կրթություն</b>	2018թ. նախատեսվում է կառուցել մանկապարտեզ:  Կիրականացվի հսկողություն՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների, սննդի որակի և ժամկետների պահպանման, նկատմամբ: Նախատեսվում է մանկապարտեզների ջեռուցման կաթսայի փոխարինում նորով:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Նոր մանկապարտեզի շինարարական աշխատանքներն ավարտվել են: Հսկողություն է սահմանվել մանկապարտեզում երեխաներին տրվող սննդի նկատմամբ և հետևողականություն է ցուցաբերվել ուսումնադաստիարակչական աշխատանքների նկատմամբ: 1. Բանակի օրվա առթիվ կազմակերպվել է «Կյանք ու կռիվ» ֆիլմի դիտում: 2.Կազմակերպվել է միջոցառում նվիրված Պ. Սևակի ծննդյան 94 ամյակին: 3.Պեդագոգի միջոցառման օրվան նվիրված կազմակերպվել են ասմունքի մրցույթներ: 4.Մուրբ Զատկի տոներին նվիրված կազմակերպվել են գեղեցիկ միջոցառումներ: 5. Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կազմակերպվել են միջոցառումներ: 6.Թիվ 34 գրադարանում կազմակերպվել է Ս. Աբրահամյանի «Ձոն	«ԼԵՎ» ՍՊԸ 15.03.2018թ.-30.08.2018թ.  /1/ 25.01.2018թ. /2/ 05.02.2017թ. /3/ 21.03.2018թ. /4/ 01.04.2018թ. /5/ 09.04.2018թ.	
-----	-------------------	--	--	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>մայրիկիս» գրքի շնորհանդեսը:</p> <p>7.Ազգային գրադարանային շաբաթվա շրջանակում գրադարանում կազմակերպվել է հանդիպում:</p> <p>8. Կազմակերպվել է Գ. Գաբիկյանի «5» վերնագրով գրքի շնորհանդեսը:</p> <p>9.Շուշիի ազատագրման օրվա առթիվ կազմակերպվել է աշակերտների այցը «Եռաբլուր» զիվորական պանթեոն:</p> <p>10. Կազմակերպվել է հուշ-ցերեկույթ նվիրված քառօրյա պատերազմի հերոսների հիշատակին:</p> <p>11.Կազմակերպվել է «Վերնատուն» թատերական խմբի մասնակցությունն «Էտյուդ» հանրապետական մրցույթ-փառատոնին:</p> <p>12. Կազմակերպվել է երաժշտական դպրոցի սաների մասնակցությունն Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների 11-րդ մրցույթ-փառատոնին:</p> <p>13.«Թանգարանների գիշեր» միջազգային գարնանային տոնի կապակցությամբ կազմակերպվել է աշակերտների այցը Ս. Կապուտիկյանի և Ավ. Իսահակյանի տուն-թանգարաններ:</p> <p><b>ԵՔ-ԲՄՇՁԲ-18/21-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:</p> <p>14. Կազմակերպվել են «Վերջին զանգ»-ին նվիրված միջոցառումներ:</p> <p>15. Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ մանկապարտեզում կազմակերպվել է մանկական միջոցառում:</p> <p>16.Իրականացվել են հերոս Արմեն Հովհաննիսյանին նվիրված՝ «Արմենը» գրքի շնորհանդեսին մասնակցության հետ կապված աշխատանքներ:</p> <p>17.Գրադարանում կազմակերպվել է հանդիպում գրող Սիլվա Մանուկյանի հետ:</p> <p><b>ԵՔ-ԲՄՇՁԲ-18/21-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:</p> <p>18. Գիտելիքի օրվա առթիվ կազմակերպվել է այցելություն ուսումնական հաստատություններ և կազմակերպվել են մանկական միջոցառումներ:</p>	<p>/6/ 12.04.2018թ.</p> <p>/7/ 18.04.2018թ.</p> <p>/8/ 05.05.2018թ.</p> <p>/9/ 07.05.2018թ.</p> <p>/10/ 19.05.2018թ.</p> <p>/11/ 20.05.2018թ.</p> <p>/12/ 05.2018 - 27.05.2018թթ.</p> <p>/13/ 20.05.2018թ.</p> <p>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</p> <p>/14/ 25.05.2018թ.</p> <p>/15/ 01.06.2018թ.</p> <p>/16/ 16.07.2018թ.</p> <p>/17/ 08.08.2018թ.</p> <p>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</p> <p>/18/ 01.09.2018թ.</p> <p>/19/ 20.09.2018թ.,</p>	
--	--	--	---	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>19. ՀՀ անկախության 27-ամյակին նվիրված, Շուշիի ազատագրման և Հայոց Բանակի օրերի առթիվ կազմակերպվել է պատանիների այցը «Եռաբլուր» զինվորական պանթեոն:</p> <p>20. Կազմակերպվել է տոնական երթ դեպի «Արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկների խաչքար»:</p> <p>21. Ուսուցչի օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում:</p> <p>22. Կազմակերպվել է Գ. Սունդուկյանի «Պեպո» ստեղծագործության բեմականացումը «Վերնատուն» թատերական խմբի սաների ներկայացմամբ:</p> <p>23. Կազմակերպվել է Երևանի 2800 ամյակին նվիրված տոնական միջոցառում:</p> <p>24. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է հանդիպում հեքիաթագիր Երազիկ Գրիգորյանի հետ:</p> <p>25. Թիվ.34 գրադարանում կազմակերպվել են Հ. Թումանյանի հեքիաթների մոտիվներով տիկնիկային ներկայացումների ցուցադրումներ:</p> <p>26. Իրականացվել են Ա. Իսահակյանի տուն- թանգարանում կայացած «Պոեզիայի արահետներով» գրական ասմունքի երեկոյին մասնակցության հետ կապված աշխատանքներ:</p> <p>27. Կազմակերպվել է մասնակցություն «ՎԵՐԱԴԱՐՁ ԱՐՄԱՏՆԵՐԻՆ» նախագծի շնորհանդեսին:</p> <p>28. Կազմակերպվել են ամանորի տոնական միջոցառումներ, երեխաներին տրվել են նվերներ:</p> <p>29. Տոն և հիշատակի օրերին նվիրված և ազգային մշակույթին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակում կազմակերպվել է նախադպրոցական տարիքի և դպրոցահասակ երեխաների այց Երևան քաղաքի տարբեր թանգարաններ՝ Էրեբունի պատմահնագիտական արգելոց- թանգարան, Հայաստանի բնության պետական թանգարան, Խ. Աբովյանի տուն-թանգարան, Ավ. Իսահակյանի տուն-թանգարան, «Մայր Հայաստան» ռազմական թանգարան, Մատենադարան, Հ. Թումանյանի թանգարան և այլն:</p>	<p>07.05.2018թ., 26.01.2018թ.</p> <p>/20/ 21.09.2018թ.</p> <p>/21/ 08.10.2018թ.</p> <p>/22/ 18.11.2018թ.</p> <p>/23/ 13.12.2018թ.</p> <p>/24/ 17.12.2018թ.</p> <p>/25/ 18.12.2018թ.</p> <p>/26/ 19.12.2018թ.</p> <p>/27/ 16.12.2018թ.</p> <p>/28/ 19.12.2017թ.- 27.12.2018թ.</p> <p>/29/ Տարվա ընթացքում</p>	
--	--	--	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

4.2	Մշակույթ	Մշտապես հսկողություն կիրականացվի կրթամշակութային հաստատությունների հարակից տարածքների՝ սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների նկատմամբ:	<p>1.Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին նվիրված կենտրոնական զբոսայգում կազմակերպել է տոնական միջոցառում:</p> <p>2.Սուրբ Սարգսի տոնին նվիրված կազմակերպվել է երիտասարդների մասնակցությունը քաղաքային տոնական խաչերթին:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>3.Հայոց բանակի օրվան նվիրված՝ մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել են տոնական միջոցառումներ:</p> <p>4.Կազմակերպվել է Բուն Բարեկենդանին նվիրված տոնախմբություն:</p> <p>5.Կազմակերպվել է «Նաղարա» դեղահարների համույթի մասնակցությունը Բարեկենդանի տոնին նվիրված տոնական երթին:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>6. Տեսնընդառաջի տոնին նվիրված կազմակերպվել է տոնական միջոցառում:</p> <p>7. Կազմակերպվել է երաժշտական դպրոցի աշակերտների մասնակցությունը Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգին:</p> <p>8.Հ. Թումանյանի ծննդյան օրվա առթիվ մարզամշակութային կենտրոնում բեմադրվել է մեծանուն գրողի «Անուշ» պոեմը:</p> <p>9.Հ. Թումանյանի ծննդյան 149 ամյակին նվիրված գրադարանում հայտարարվել է «Թումանյանական օրեր» և կազմակերպվել միջոցառումներ:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>10.Կանանց տոնին նվիրված՝ կազմակերպվել է տոնական միջոցառում և այցելություն կրթամշակութային հաստատություններ:</p> <p>11. Գրադարանում կազմակերպվել է հանդիպում ժամանակակից գրող Արփինե Գյուրջինյանի հետ:</p> <p>12. Երաժշտական դպրոցում և մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերին:</p>	<p>/1/ 03.01.2018թ.</p> <p>/2/ 27.01.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b></p> <p>/3/ 26.01.2018թ. և 28.01.2018թ.</p> <p>/4/ 05.02.2018թ.</p> <p>/5/ 11.02.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b></p> <p>/6/ 13.02.2018թ.</p> <p>/7/ 16.02.2018թ.</p> <p>/8/ 19.02.2018թ.</p> <p>/9/ 19.02-25.02.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b></p> <p>/10/ 07.03.2017թ.</p> <p>/11/ 14.03.2018թ.</p> <p>/12/ 20.03.2018թ. և 23.03.2018թ.</p>	
-----	----------	--	--	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>13. Պոեզիայի միջազգային օրվան նվիրված գրադարանում կազմակերպվել է պոեզիայի ժամ:</p> <p>14. Երաժշտական դպրոցում կազմակերպվել է հանդիպում երաժշտագետ Արմեն Բուդաղյանի հետ:</p> <p>15.Սուրբ Զատկի տոնի առթիվ եկեղեցու բակում կազմակերպվել է միջոցառում:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>16.Մայրության, գեղեցկության և սիրո տոնին նվիրված կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է տոնական միջոցառում և կանանց ու աղջիկներին նվիրվել ծաղիկներ:</p> <p>17.Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակում գրադարանում բեմականացվել է Շ. Պերոյի «Կարմիր գլխարկը» հեքիաթը:</p> <p>18. Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում երաժշտական դպրոցում կազմակերպվել է վիկտորինա-մրցույթ:</p> <p>19.Հուշարձանների պահպանության օրվա առթիվ կազմակերպվել են հուշարձանների լվացման աշխատանքներ:</p> <p>20. Կազմակերպվել է միջոցառում նվիրված «Արցախյան և Քառօրյա» պատերազմների հերոսներին:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>21.Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ՝ կազմակերպվել է այց վ/2 տեղակայված Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար և Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:</p> <p>22.Նուբարաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցու ուխտի օրվա կապակցությամբ կազմակերպվել է մատաղի հյուրասիրություն և տոնական համերգ:</p> <p>23.Պարի միջազգային օրվան նվիրված կազմակերպվել է տոնական միջոցառում և ազգային ավանդական պարերի ուսուցում:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>24. Հաղթանակի և խաղաղության տոնին նվիրված կազմակերպվել է տոնական քայլերթ և տոնական համերգ:</p>	<p>/13/ 21.03.2018թ.</p> <p>/14/ 28.03.2018թ.</p> <p>/15/ 01.04.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b></p> <p>/16/ 07.04.2018թ.</p> <p>/17/ 11.04.2018թ.</p> <p>/18/ 12.04.2018թ.</p> <p>/19/ 18.04.2018թ.</p> <p>/20/ 23.04.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b></p> <p>/21/ 24.04.2018թ.</p> <p>/22/ 28.04.2018թ.</p> <p>/23/ 29.04.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b></p> <p>/24/ 09.05.2018թ.</p>	
--	--	--	---	---	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>25.«Թանգարանների գիշեր» միջազգային գարնանային տոնի կապակցությամբ կազմակերպվել է պատանիների այցը Մատենադարան, Փայտարվեստի թանգարան, Մերգեյ-Փարաջանովի և Ե. Չարենցի տուն-թանգարաններ:</p> <p>26.Հայաստանի Առաջին Հանրապետության 100 ամյակին նվիրված կազմակերպվել են տոնական միջոցառումներ:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>27. Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ կազմակերպվել է կավճանկարում և տոնական մեծ միջոցառում:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>28.«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում կազմակերպվել է մարզահամերգային միջոցառում, ազգային պարերի բաց դաս և մանկական միջոցառումներ:</p> <p>29.Պարբերաբար կազմակերպվել է երաժշտական դպրոցի սաների մասնակցությունը Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի համերգներին:</p> <p>30.Գրադարանում կազմակերպվել է հանդիպում ամերիկահայ գրող Միլվա Մանուկյանի հետ:</p> <p>31.ՀՀ սահմանադրության օրվան նվիրված՝ կազմակերպվել է մասնակցությունը Ազատության հրապարակի տոնական միջոցառումներին և քայլերին:</p> <p>Կազմակերպվել է տոնական համերգ կենտրոնական զբոսայգում և «ՀՀ պետական խորհրդանշանները» խորագրով դաս-միջոցառում գրադարանում:</p> <p>32.Վարդավառի տոնին նվիրված կազմակերպվել է ուրախ տոնակատարություն և մասնակցություն Մուրբ Մարգիս եկեղեցուց մեկնարկվող տոնական երթին:</p> <p><b>ԵՔ-ԲՄԾՁԲ-18/21-2</b></p> <p>33.«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում վարչական շրջանի բակերում և այգիներում կազմակերպվել են 9 մանկական զվարճալի միջոցառումներ:</p>	<p>/25/ 20.05.2018թ.</p> <p>/26/ 28.05.2018թ. , 29.05.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b> /27/ 01.06.2018թ.</p> <p>/28/ 08.06.2018- 27.06.2018թթ.</p> <p>/29/ Տարվա ընթացքում</p> <p>/30/ 28.06.2018թ.</p> <p>/31/ 05.07.2018թ.- 07.07.2018թ.</p> <p>/32/ 08.07.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b> /33/ 01-06.2018թ.- 30.08.2018թ.</p>	
--	--	---	---	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>34.Կազմակերպվել է վարչական շրջանի մասնակցությունը «Ձմերուկի» 6-րդ փառատոնին:</p> <p>35. Եկեղեցու բակում կազմակերպվել է բակային ճամբար:</p> <p>36.Կազմակերպվել է ճամբարական երեխաների ուխտագնացությունը Մայր տաճար և Սուրբ Գայանե վանք:</p> <p>37.«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է «Լուսաշող ամառ Նուբարաշենում» խորագրով տոնական մեծ միջոցառում:</p> <p>38. Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնին նվիրված եկեղեցու բակում կազմակերպվել է ժողովրդական ուրախ տոնախմբության:</p> <p>39.«Երևանյան ամառ» եռամսյա միջոցառումների ծրագրի փակմանը նվիրված կազմակերպվել է կիթառի երեկո խարույկի շուրջ:</p> <p><b>ԵՔ-ԲՄՄՁԲ-18/21-2</b></p> <p>40.ՀՀ անկախության տոնին նվիրված՝ կենտրոնական զբոսայգում կազմակերպվել են տոնական միջոցառումներ:</p> <p><b>ԵՔ-ԲՄՄՁԲ-18/21-2</b></p> <p>41.Ուսուցչի օրվա առթիվ կազմակերպվել է այցելություն կրթամշակութային հաստատություններ</p> <p>42.«Գրադարանավարի օրվա» առթիվ գրադարանում կազմակերպվել է գրական միջոցառում:</p> <p>43.«Էրեբունի-Երևան» 2800 ամյակին նվիրված կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է տոնական համերգ:</p> <p>44. Գրադարանում կազմակերպվել է հանդիպում գրողներ Անահիտ Տարոնցու, Ալեքսան Գոմցյանի և Հովհաննես Պապիկյանի հետ:</p> <p><b>ԵՔ-ԲՄՄՁԲ-18/21-2</b></p> <p><b>Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին նվիրված՝</b></p> <p>45.Ա. Բաբաջանյանի անվան համերգասրահում կազմակերպվել է մարզամշակութային կենտրոնի տոնական մեծ միջոցառումը:</p> <p>46.Կազմակերպվել է տոնական համերգային միջոցառում երաժշտական դպրոցում:</p>	<p>/34/ 22.07.2018թ.</p> <p>/35/ 30.07.2018թ.- 05.08.2018թ.</p> <p>/36/ 05.08.2018թ.</p> <p>/37/ 10.08.2018թ.</p> <p>/38/ 12.08.2017թ.</p> <p>/39/ 24.08.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b> /40/ 20.09.2018թ. և 21.09.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b> /41/ 05.10.2017թ.</p> <p>/42/ 07.10.2017թ.</p> <p>/43/ 21.10.2018թ.</p> <p>/44/ 02.11.2018թ.</p> <p><b>«Էլիտա Էս Վե» ՍՊԸ</b> /45/ 14.12.2018թ.</p> <p>/46/ 24.12.2018թ.</p>	
--	--	--	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>47. Կազմակերպվել է տոնական մեծ միջոցառում գլխավոր տոնաձառի շուրջ:</p> <p>48. 230 երեխայի տրամադրվել են Պատանի հանդիսատեսի թատրոնի «Գեղեցկուհին և հրեշը» ամանորի տոնական թատերական ներկայացման տոմսեր և կազմակերպվել է նրանց տեղափոխումն ու մասնակցությունը ներկայացմանը:</p> <p>49. Տոն և հիշատակի օրերին նվիրված և ազգային մշակույթին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակում կազմակերպվել է նախադպրոցական տարիքի և դպրոցահասակ երեխաների այց Երևան քաղաքի տարբեր թանգարաններ՝ Մ. Սարյանի տուն-թանգարան, Էրեբունի արգելոց-թանգարան, Կոմիտասի անվան պանթեոն, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ և Փարաջանովի թանգարան, Խնկո Ապրի գրադարան, Հայաստանի պատմության թանգարան, Ժամանակակից արվեստի թանգարան և այլ:</p>	<p>/47/ 25.12.2018թ.</p> <p>/48/ 26.12.2018թ.</p> <p>/49/ Տարվա ընթացքում</p>	
--	--	--	---	---	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

4.4	Սպորտ	<p>2018թ. նախատեսվում է կազմակերպել և իրականացնել սպորտային, ՀՀ ազգային տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, մարզաառողջարարական և ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված ծրագրեր, այցեր թանգարաններ: «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում կկազմակերպվեն բակային ճամբարներ:</p>	<p>1.Կազմակերպվել են ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված 27-րդ մարզական խաղերի շրջանային փուլի մրցումները:</p> <p>2.Անցկացվել է « Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ից 3-րդ և 4-ից 7-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման ներդպրոցական և շրջանային փուլերի մրցումները:</p> <p>3.Կազմակերպվել է ֆիթնեսի անվճար պարապմունքներ վարչական շրջանի բնակչության համար:</p> <p>4. Մարզադպրոցում անցկացվել է ՀՀ ՊՆ Երևանի շախմատի անհատական մրցաշար:</p> <p><b>ԵՔ-ԲՄՇՁԲ-18/24-3</b></p> <p>5.Կազմակերպվել է վարչական շրջանի հավաքական թիմերի մասնակցությունը ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված 27-րդ մարզական խաղերի քաղաքային փուլի մրցումներին:</p> <p>6.Կազմակերպվել է մանկապարտեզի թիմի մասնակցությունը «Լավագույն նախադպրոցական ուսումնական հաստատություն» մրցույթի շրջանային փուլին:</p> <p><b>ԵՔ-ԲՄՇՁԲ-18/24-3</b></p> <p>7.Կազմակերպվել է ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության խաղերի շրջանային փուլի միջումները և ապահովվել է վարչական շրջանի հավաքական թիմերի մասնակցությունը քաղաքային փուլի միջումներին:</p> <p>8.Կազմակերպվել է մանկապարտեզի թիմերի մասնակցությունը երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված քաղաքապետարանի սպորտ բաժնի և օլիմպիական կոմիտեի կողմից կազմակերպված մարզամշակութային միջոցառումներին:</p> <p>9.«Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում կազմակերպվել է սպորտլանդիա մանկապարտեզի ավագ խմբերի</p>	<p>/1/ Փետրվար-մարտ</p> <p>/2/Հունվար-փետրվար</p> <p>/3/Փետրվար-մարտ</p> <p>/4/ 17.02-25.02.2018թ.</p> <p><b>Ա/Ձ Կարինե Հովակիմյան</b></p> <p>/5/ ապրիլ-մայիս</p> <p>/6/ 25.04.2018թ.</p> <p><b>/Ձ Կարինե Հովակիմյան</b></p> <p>/7/ ապրիլ-մայիս</p> <p>/8/ 26.05.2018թ.</p> <p>/9/ 01.06.2017թ.</p>	
-----	-------	---	--	---	--

		<p>երեխաների մասնակցությամբ:</p> <p><b>ԵՔ-ԲԸՄՁԲ-18/24-1</b></p> <p>10. Կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանային փուլի մրցումները և ապահովվել է վարչական շրջանի մարզական ընտանիքների մասնակցությունը քաղաքային փուլի մրցումներին:</p> <p><b>ԵՔ-ԲԸՄՁԲ-18/24-1</b></p> <p>11. Կազմակերպվել և անցկացվել են «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2018թ. համաքաղաքային բակային ավանդական փառատոնի շրջանային փուլի մրցումները և ապահովվել է վարչական շրջանի թիմերի մասնակցությունը քաղաքային փուլի մրցումներին:</p> <p>12. «Երևանյան ամառ 2018» եռամսյա միջոցառումների շրջանակում վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում տարեցների մասնակցությամբ կազմակերպվել է մարզատրամաբանական խաղերի մրցույթ:</p> <p>13. Կազմակերպվել է վարչական շրջանի տարեցների մասնակցությունը տարեցների հանրապետական խաղերի քաղաքային փուլի մրցումներին շախմատ, շաշկի, կարճ նարդի, դարթս մարզաձևերով:</p> <p>14. Տոն և հիշատակի օրերին նվիրված՝ վարչական շրջանում կազմակերպվել են ձյուդոյի և շախմատի բաց առաջնություններ և շախմատի բլից մրցաշարեր:</p> <p>15. ՀՀ անկախության 27-ամյակին նվիրված կազմակերպվել է հեծանվավորի տոնական շքերթ:</p> <p><b>ԵՔ-ԲՄՄՁԲ-18/24-3</b></p> <p>16. Կազմակերպվել և անցկացվել են 2018 թվականին անցկացվելիք նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի շրջանային փուլի մրցումները և ապահովվել է շրջանային փուլում 1-ին տեղը գրաված հ.95 միջնակարգ դպրոցի հավաքական թիմի մասնակցությունը Վազգեն</p>	<p><b>«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ</b> /10/ հունիս-հուլիս</p> <p><b>«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ</b> /11/ հունիս-հուլիս</p> <p>/12/ օգոստոս</p> <p>/13/ սեպտեմբեր</p> <p>/14/ տարվա ընթացքում</p> <p>/15/ 21.09.2018թ.</p> <p><b>Ա/Ձ Կարինե Հովակիմյան</b> /16/ 12.10.2018թ.- 13.10.2018թ. 22.10.2017թ.-23.10.2017թ.</p>	
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>Մարզայանի անվան ռազմական ինստիտուտում անկացված քաղաքային փուլի մրցումներին:</p> <p>17. Կազմակերպվել է նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի քաղաքային փուլի մրցումներում 1-ին տեղը գրաված հ.95 միջնակարգ դպրոցի հավաքական թիմի մասնակցությունը Իջևանում կայացած հանրապետական փուլի մրցումներին:</p> <p>18. Կազմակերպվել է վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի ձյուդոյի մարզիկների մասնակցությունը քաղաքային, հանրապետական և միջազգային տարբեր առաջնություններին:</p> <p>19. Վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել են 2-րդ, 3-րդ, 4-րդ կարգերի որակավորման մրցաշարեր:</p> <p>20. Կազմակերպվել է վարչական շրջանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցի սաների մասնակցությունը քաղաքային, հանրապետական և միջազգային տարբեր առաջնություններին:</p>	<p>/17/ 28.10.2018թ.- 31.10.2018թ.</p> <p>/18/ տարվա ընթացքում</p> <p>/19/ տարվա ընթացքում</p> <p>/20/ տարվա ընթացքում</p>	
<b>5</b>	<b>Սոցիալական ապահովություն</b>				
5.1	Աջակցության ծրագրեր	<p>Սոցիալապես անապահով ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, միայնակ տարեցներին, կենսաթոշակառուներին, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, բազմազավակ ընտանիքներին կցուցաբերվի դրամական, նյութական և պարենային աջակցություն:</p> <p>Առողջապահության ոլորտում շարունակվելու է պետության կողմից երաշխավորված, անվճար և արտոնյալ</p>	<p><b>Ռ ԵՂ-18/9-2</b></p> <p>1. Սոցիալապես անապահով 35 բնակչի ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն:</p> <p>2. Մայիսի 9-ին` Հաղթանակի օրվա կապակցությամբ, վարչական շրջանի զոհված ազատամարտիկների ընտանիքներին, Արցախյան պատերազմի 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին տրամադրվել է դրամական աջակցություն և ծաղիկներ:</p> <p>3. Սոցիալապես անապահով 60 դպրոցահասակ երեխաներ 3 հերթափոխով ուղեկցվել են Հանքավանի «Լուսաբաց» ճամբար:</p> <p>4. Մեպտեմբերի 1-ի կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին տրամադրվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:</p> <p>5. Ամանորի կապակցությամբ 90 սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրվել են սննդային փաթեթներ:</p>	<p><b>Երևան հիմնադրամ</b></p> <p>18.01.2018թ. – 31.03.2018թ.</p>	

		<p>պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը սոցիալապես անապահով բնակիչներին: Հաղթանակի օրվա կապակցությամբ ֆինանսական աջակցություն կտրամադրվի վարչական շրջանի գոհված ազատամարտիկների ընտանիքներին, Արցախյան պատերազմի 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին: Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողագուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների երեխաների հանգիստը կկազմակերպվի մարզաառողջարանային ճամբարում: Մեպտեմբերի 1-ի կապակցությամբ երեխաներին կտրամադրվեն պայուսակներ և գրենական պիտույքներ: Ամանորին՝ սննդի փաթեթներ:</p>	<p>6. Պետպատվերի շրջանակում ստացիոնար բուժում, հետազոտություն կամ վիրահատական միջամտություն է ստացել 18 բնակիչ:</p>		
5.2	Համագործակցություն	<p>Կշարունակվի համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ</p>	<p><b>1. ՀԿ-ների և ԲՀԿ-ների հետ համագործակցություն</b>          «Շողիկ», «Կամրջակ», «Առդա», «Սատար» հաշմանդամների, «Առաքելություն Հայաստան», ՀԿ-ների, «Նուբար» սոցիալ –մշակութային հիմնադրամի, Շվեյցարահայ անհատ բարեգործի և Անհատ բարերարի հետ համագործակցության արդյունքում սոցիալապես անապահով 394 շահառուի տրամադրվել են տարաբնույթ սոցիալական աջակցություններ:</p>		

5.3	Այլ ծրագրեր		<p>1. Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի կազմավորման 25 ամյակի կապակցությամբ, այցելություն է կատարվել Երկու զինծառայող ունեցող ընտանիքի, հատկացվել է աջակցություն, այցելություն է կատարվել Եռաբլուր զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու գոհված ազատամարտիկների հիշատակին:</p> <p>2. Բարեկենդանի և Բուն Բարեկենդանի տոների կապակցությամբ վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ 15 բազմազավակ ընտանիքի տրամադրվել է սոցիալական աջակցություն և երիտասարդներին տրամադրվել է տրանսպորտային միջոց նրանց տեղափոխումը Սուրբ Սարգիս եկեղեցի կազմակերպելու համար:</p> <p>3. Տեառնընդառաջի տոնի կապակցությամբ սոցիալապես անապահով 9 նորապսակ զույգի վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրվել նվերներ:</p> <p>4. Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է դպրոցահասակ երեխաների այցը թանգարաններ:</p> <p>5. Հաղործ քաղաքի հետ համագործակցության շրջանակներում այցելություն է կատարվել Հաղործի գործառն, զինվորիներին տրամադրվել է քաղցրեղեն:</p> <p>6. Կանանց միամսյակի շրջանակներում վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ 12 սոցիալապես անապահով հղի կանանց և վաստակաշատ թոշակառու 5 ուսուցչի տրամադրվել են նվերներ և ծաղիկներ, կին անցորդ բնակիչներին բաժանվել են ծաղիկներ, 2 երեխայի տրամադրվել է օգնություն: 5 ընտանիքի վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ տրամադրվել են նվերներ և ծաղիկներ:</p> <p>7. Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ սոցիալապես անապահով 2 տարեց բնակչի տրամադրվել է օգնություն: Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ տրամադրվել է ավտոբուս զինծառայողների ծնողներին Էրեբունի տանելու համար:</p> <p>8. Մայիսի 15-ին՝ ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ, այցելություն է կատարվել 5 և ավելի երեխա ունեցող 5 ընտանիքի: Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ նրանց տրամադրվել են նվերներ:</p> <p>9. Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական</p>		
-----	-------------	--	--	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>սպասարկման կենտրոնին վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ տրամադրվել է տրանսպորտային միջոց տարեցներին Հանրային հեռուստատեսություն տեղափոխելու և հետ բերելու համար:</p> <p>10. Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ 5 բնակչի տրամադրվել է սոցիալական աջակցություն</p> <p>11. Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ սոցիալապես անապահով ընտանքիների դպրոցական երեխաներին հատկացվել է փոխադրամիջոց և տոմսեր ամանորի տոնական ներկայացման մասնակցելու համար, ինչպես նաև տրամադրվել են ամանորի քաղցրավենիքի փաթեթներ:</p> <p>12. Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնին վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ տրամադրվել է փոխադրամիջոց տարեցներին թատրոն տեղափոխելու և հետ բերելու համար:</p> <p>13. Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ կատարվել է այցելություն 15 հաշմանդամ երեխաների և տրամադրվել է քաղցրավենիքի փաթեթ:</p>		
--	--	---	--	--

Շենգավիթ վարչական շրջան					
Հ/հ	Ծրագր կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
<b>Տարածքային բարեկարգման աշխատանքներ</b>					
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:	<b>ԲՄԱՇՁԲ 18/61-10</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ: Քաղաքային ծրագրով շուրջ 108100քմ ասֆալտ բետոնե ծածկի փոսալցման աշխատանքներ են կատարվել Բագրատունյաց, Արարատյան, Գ. Նժդեհի, Շիրակի, Թամանցիների, Սևանի, Հ.Հովհաննիսյան, Հ. Հովսեփյան, Նորագավիթ 1-ին փողոցներում, Արշակունյաց 3-րդ նրբանցք, Կարմիր Բլուրի գերեզմանատան հարակից տարածքում, Ն. Չարբախ 1-ին	«Արհովշին» ՍՊԸ 11.04.2018- 01.10.2018թթ.	Նոր Խարբերդի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներն ամբողջությամբ չեն իրականացվել միջոցների անբավարարությ

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ծածկի վերանորոգման աշխատանքներ:	փողոցից եկեղեցի և գերեզմանատուն տանող ճանապարհները, Շարուրի, Նիզամի, Արտաշիսյան, Չեխովի, Սևանի փողոցներում, Գ. Նժդեհի փողոցի հ.հ. 13, 13/1, 13/2, 15 շենքերի բակային և միջբակային տարածքներում, հ. 139 մանկապարտեզի բակային տարածքում, Արտաշիսյան, Չեխովի, Սևանի, Ֆրունզե, Անանուն, Շևչենկո, Շենգավիթ, փողոցներում, Ն. Չարբախ և Նոր Խարբերդ թաղամասերում, շենքերի բակային և միջբակային տարածքներում, Շևչենկո, Վ. Շենգավիթ 2-րդ փող. 2-րդ նրբ. Կոմիտասի անվ. այգու շրջակայքում, Տրանսպորտայինների փողոց: Նոր Խարբերդում իրականացվել են 5500քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ, իսկ Երևանի քաղաքապետարանի ծրագրերով իրականացվել է 5677քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:		ան պատճառով:
1.2	Եզրաքարերի վերանորոգում	Իրականացվելու է 1000 գմ եզրաքարերի հիմնանորոգում և վերանորոգում:	<b>ԵՔ-ԲՄԱՇՉԲ-18/17-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ: Եզրաքարերի տեղադրման աշխատանքներ են կատարվել Եղ. Թադևոսյան, Արարատյան և Ն.Չարբախի 3-րդ փողոցներում՝ 100գմ, Շենգավիթ, Շևչենկո, Հ. Հովսեփյան, Մանանդյան, Եղ. Թադևոսյան նրբ. Անանուն, փողոցներում Շիրակի 16, 18, Ֆրունզե 16, 18, շենքերի բակային տարածքներում՝ 900գմ:	«Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ 08.02.2018-30.08.2018թթ.	
1.3	Բակային տարածքների բարեկարգում	Իրականացվելու է 5 բակի բարեկարգման աշխատանքներ, կտեղադրվեն մանկական և սպորտային խաղեր, զրուցատաղավարներ, նստարաններ, 28 բակային տարածքներում կիրականացվեն շուրջ 320 միավոր ընդհանուր օգտագործման գույքի ընթացիկ վերանորոգման	<b>ԵՔ-ԲՄԱՇՉԲ-18/68-2</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ: 1.Իրականացվել է Ֆրունզեի փողոցի հ. 12, 16, 18 շենքերի միացյալ բակի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ: <b>ԵՔ-ԲՄԱՇՉԲ-18/68-1</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ: 2. Գ. Նժդեհի 10 և Մանթաշյան 51, շենքերի միացյալ բակի բարեկարգման աշխատանքները կատարվել են մասամբ:	1.«Սպառչինար» ՍՊ ընկերություն 11.04.2018-30.07.2018թ.թ.  «Աննա -80» ՍՊ ընկերություն 11.04.2018-30.07.2018թ.թ.	2, 3, 4, 5 կետերում նշված աշխատանքների ընթացքում խախտվել է պայմանագրով սահմանված ժամկետը, չի ապահովվել աշխատանքների որակը:

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		աշխատանքներ:	3. Գ. Նժդեհի 6, 8, շենքերի միացյալ բակի բարեկարգման աշխատանքները կատարվել են մասամբ: 4. Շիրակի 16 և 18, շենքերի միացյալ բակի բարեկարգման աշխատանքները կատարվել են թերի: 5. Շիրակի 1-ին նրբ. 3, 4, 5 շենքերի միացյալ բակի բարեկարգման աշխատանքները չեն կատարվել: Վերանորոգվել է 513 միավոր ընդհանուր օգտագործման գույք:		Պայմանագիրը ներկայացվել է միակողմանի լուծման:
1.4	Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում	Նոր Խարբերդ թաղամասում նախատեսվում է իրականացնել 2,5 կմ արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքներ:  Գեղարվեստական ձևավորման նպատակով կտեղադրվեն 583 լուսատուներ և կիրականացվեն 450զմ գեղարվեստական լուսավորության ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:	Տեղադրվել են 583 լուսատուներ և իրականացվել են 450զմ գեղարվեստական լուսավորության ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:		Արտաքին լուսավորության ցանցի սպասարկման աշխատանքները իրականացվել են «Երբաղլույս» ՓԲ ընկերության կողմից, իսկ նոր ցանցի կառուցման աշխատանքները չեն կատարվել հատկացումների բացակայության պատճառով:
1.5	Մուտքերի վերանորոգում	Կվերանորոգվի 224 մուտք:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/40-7</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ հայտարարվել է մրցույթ, կնքվել է պայմանագիր: Վերանորոգվել է 95 մուտք, իսկ համատիրությունների կողմից՝ 94 մուտք, ընդամենը՝ 189 մուտք: Վերանորոգման աշխատանքներն իրականացվել են հետևյալ հասցեներում՝ Գ. Նժդեհի 29, Գ. Նժդեհի 35, Արշակունյաց 53, Մայիսի 9-ի 9, Գ. Նժդեհի 19, Գ. Նժդեհի 13/2, Մայիսի 9-ի 13, Աերացիա 3, Աերացիա 2/1ա, Աերացիա 2/7, Աերացիա 2, Բագրատունյաց 36, Բագրատունյաց 40, Շարուրի 12, Շարուրի 25, Շարուրի 10, Շարուրի 16, Շարուրի 18,	«Արհովշին» ՍՊԸ 15.03.2018թ.-30.09.2018թ.	Մրցույթով նախատեսվել էր 95 մուտք, իսկ 129 մուտք պետք է վերանորոգվեր համատիրությունների կողմից, սակայն վերջիններիս կողմից

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>Ս.Տարոնցի 30, Ս. Տարոնցի 12, Ս. Տարոնցի նրբ. 6, Ս. Տարոնցի նրբ. 4, Մանանդյան 32, Եղբայրության 19, Հ. Հովսեփյան 10/1, Արտաշիսյան 49/19ա, Արտաշիսյան 47/19, Արտաշիսյան 45/20, Արտաշիսյան 45/21,</p> <p>Բագրատունյաց 6, Բագրատունյաց 1-ին նրբ. 13, Արտաշիսյան 63/2, Արտաշիսյան 46, Արտաշիսյան 48, Չեխովի 28, Չեխովի 8/1, Մանանդյան 1ա, Չեխովի 6, Մանանդյան 1, Մանանդյան 1/3, Շիրակի 3 օբ, Արտաշիսյան 79, Արշակունյաց 135 բ, Շարուրի 3, Շարուրի 4, Արշակունյաց 135 վ, Արշակունյաց 135 գ, Շիրակի 54, Նժդեհի 4, Արշակունյաց 46, Արշակունյաց 54/1, Նժդեհի 28, Արշակունյաց 42/1,</p> <p>Նժդեհի 28/2, Նժդեհի 28/1, Նժդեհի 32/1, Մանթաշյան 4, Նժդեհի 30/3, Մանթաշյան 4/2, Եղ. Թադևոսյան 5, Մանթաշյան 2, Մանթաշյան 5,</p> <p>Բագրատունյաց 51, Նժդեհի 8, Ֆրունզե 16, Արշակունյաց 52/1, Արշակունյաց 44/2, Ֆրունզե 6/6, Նժդեհի 30, Արտաշիսյան 37, Արտաշիսյան 39, Գ. Նժդեհի 7, Բագրատունյաց 13, Մանթաշյան 28ա, Բագրատունյաց 12, Եղբայրության 14, Եղբայրության 16, Մանանդյան 17, Մանանդյան 9, Գ. Նժդեհի 9, Գ. Նժդեհի 3, Չեխովի 23, Ն. Շենգավիթ 11 փ. 37/2, Եղ. Թադևոսյան նրբ. 1, Ֆրունզե 18, Բագրատունյաց 16, Բագրատունյաց 18, Բագրատունյաց 33, Բագրատունյաց 26,</p> <p>Գ. Նժդեհի 4, Գ. Նժդեհի 6, Գ. Նժդեհի 8, Մանթաշյան 3, Մանթաշյան 5, Մանթաշյան 4, Արշակունյաց 48, Արշակունյաց 46, Արշակունյաց 52/2, Արշակունյաց 52/3, Արշակունյաց 42/2, Ֆրունզե 60ա, Արշակունյաց 54/2, Արշակունյաց 44/2, Արշակունյաց 54, Արշակունյաց 52,</p> <p>Ս. Տարոնցու 7, Եղ. Թադևոսյան նրբ. 10, Ս. Տարոնցու 30, Եղ. Թադևոսյան 10, Եղ. Թադևոսյան 18, Եղ. Թադևոսյան նրբ. 3, Եղ. Թադևոսյան նրբ. 7, Եղ. Թադևոսյան նրբ. 9, Եղ. Թադևոսյան 17, Եղ. Թադևոսյան 15, Ն. Շենգավիթ 11 փող 37/1, Ն. Շենգավիթ 11 փող 37/2, Արտաշիսյան 50, Արտաշիսյան 46, Արտաշիսյան 48, Արտաշիսյան 44/3, Եղբայրության 19, Մանանդյան 32, Շարուրի</p>		<p>վերանորոգվել է 94 մուտք՝ բնակիչների կողմից համապատասխան վճարումներ չկատարելու պատճառով:</p>
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			16, Շիրակի 1ա, Շիրակի 68, Շիրակի 70, Աերացիա 5, Աերացիա 3, Աերացիա 2/8, Մայիսի 9-ի 10, Մայիսի 9-ի 8, Գ. Նժդեհի 15, Գ. Նժդեհի 13/2, Գ. Նժդեհի 21, Գ. Նժդեհի 13/1, Գ. Նժդեհի 29, Մանթաշյան 28, Եղբայրության 7, Նիզամի 24, Մանանդյան 1/2, Մանանդյան 1ա, Արշակունյաց 135ե, Շիրակի 33:		
<b>Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում</b>					
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	Վարչական շրջանի մի շարք հասցեներում կշարունակվի կանաչ տարածքների ընդլայնումը, կստեղծվեն 3580քմ սիզամարգեր:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/6-3</b> Կատարվել են այգիների, պուրակների և սիզամարգերի տերևներից և աղբից մաքրման, կանաչ տարածքներից մացառների հեռացման, բահափորի, ծառերի չորուկների, կոճղաշիվերի կտրման և բնաբաժակների փխրեցման աշխատանքներ: Կատարվել է սիզամարգերի սիզաքաղ մեքենայով, խոտհունձ և հնձված խոտի հավաքման աշխատանքներ /90000քմ/, ինչպես նաև գերանդիով հնձման աշխատանքներ: Կատարվել է ջրցան մեքենայով ծառերի և սիզամարգերի ոռոգում: Ստեղծվել են նոր սիզամարգեր հետևյալ հասցեներում՝ Շիրակի փողոց - 1500քմ, Մանանդյան փողոց – 1460քմ, Շևչենկո փողոց – 370քմ:	«Շենգավիթ-Կանաչապատում» ՓԲԸ 24.01.2018-25.12.2018թ.թ.	Զեխովի փողոցում չի կատարվել 250քմ սիզամարգերի ստեղծման աշխատանքներ, քանի որ չի անցկացվել ոռոգման ջրագիծ:
2.2	Ծաղկային տարածքների ստեղծում և խնամք		<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/6-3</b> Շրջանի ծաղկանոցներում կատարվել են ծաղիկների քաղհան՝ փխրեցնելով հողը հողուրագով, սնուցում չոր հանքային պարարտանյութերով, բուժում թունաքիմիկատով: Կատարվել են ծաղկանոցներից ծաղիկների ցողունների հավաքման աշխատանքներ: Կակաչների սոխուկների տնկման աշխատանքներ են կատարվել Կոմիտասի անվ. Պանթեոնում՝ թվով 8000 հատ: Կատարվել է թվով 149600 հատ պիտունյա, փիփերթ, գիորգինա և տագետես ծաղկատեսակների տնկման աշխատանքներ:	«Շենգավիթ-Կանաչապատում» ՓԲԸ 24.01.2018-25.12.2018թ.թ.	

Երևանի զարգացման 2018 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			Ա.Կարապետյանի պուրակում տեղադրվել է 4 հատ կոմպոզիցիա:		
